

244


Printed in Turkey

Մ Ի Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՅԳԸՅԻՆ, ԲԸՆԸՄԻՆԿԸՆ, ԳԸԸԳԻՏԸԿԸՆ
ԵՒ ՔԸԸԸԸԸԸԸԸՆ

ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐԶԱՆ ՄԻԸՄԵԸՅ





ՅԵՐՈՒՍԸԸԸՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՄԸԸՈՑ ՅԱԿՈՎԸԸԸՆՑ

1873

955-Ա2

Printed in Turkey



ՈՒԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻՒ 5.

ԱՄՍԱԳԻՐ

ՄԱՅԻՍ 31
1873.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՈՐԴԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ

Դարձեալ կ'ասեմ, որ կեանքն իրատ անմեղ առիթ է մեր տեսու թեան անկատարութեան համար, ե թէ մարմինն չունենայ իւր վատ ազ Գեցութիւնն տեսութեան վերայ: Կեանքն առիթ է անկատարութեան, և այնպիսի իրական առիթ, որ ինքնին բաւական է իտաւարեցնելու այն փառաւոր տեսութիւնն, յորում կը կա յոնայ մեր ուրախութիւնն ու փրկութիւնն: Կեանքն, որ անշուշտ իւր ջրջանակի ամեն կողմէն, ամեն գծէն պէտք է որ դէպի աստուածային կեդրոնն ամփոփի. կեանքն, այնպէս, ինչպէս որ բնութենէն կը տրուի, ամեն

մանրամասն պտրագայից մէջ, պէտք է որ փոխարկի և լինի կենդանի և տեւական պաշտամունք: Բայց երկրաւոր և առօրեայ կեանքն, որ իւրաքանչիւրիս համար կապուած է ուրիշ հաղարաւոր կեանքերու հետ, կապուած է ընկերականութեան հետ, կապուած է նիւթական պիտոյից հետ, կապուած է կորստական շահույց հետ, կեանքն այնպէս կտոր կտոր եղած է, այնպէս տարբեր և մանր մասներու բաժնուած է, որ բարեպաշտութեան արուեստ պէտք է, որ կարող լինի մի ութիւն տալ կեանքին և անսայթաք ճանապարհ յարդարել նորա առջեւ: Այլ կարող է պարծիլ, թէ ինքն չը յաւիտական իր կենաց հրապուրներէն

Շարունակութիւն և վերջ: Երես Գ:

այլ անընդհատ առ Մատուած կը նայի
իւր ամեն մի պարապմանց մէջ, որոց
անընդմիջական առարկայն երկրաւոր
է : Ո՛վ կարող է միշտ մտադիր ու ար-
թուն լինիլ և իւր մէն մի գործն աւ-
տուածային կեքով դրոշմել : Ո՛վ կա-
րող է յուսալ, թէ երբէք պիտի չը
վերպի, չը կորուսանէ իւր տեսութե-
նէն այն պաշտելի Լաւն, որ շարու-
նակ մեզ վրայ կը նայի և մեր ամեն
բայափոխերն սւ խորհրդներն կը դի-
տէ : Ո՛վ չը գիտէ, որ ոչ թէ միայն
երկար ժամանակ, այլ մի ժամու, մի
վայրկենի, մի ակնթարթի մէջ անգամ,
երբ Մատուծոյ տեսութիւնն կը կորու-
սանեմք, իսկոյն Մատուծոյ որդիու-
թենէն կը փոխարկիմք յորդի աշխար-
հի :

Վ երջապէս, եթէ ձեր մտայ տե-
սարանին առջեւ ամփոփէք այն ամեն
առիթներն, որք Մատուծոյ որդւոց
տեսութիւնն կը խաւարեցնեն, եթէ
նոցա վերայ յաւելուք կրօնքի դէմ
եղած բոլոր խօսքերն ու գրուածներն,
եթէ ՚ի հաշիւ առնուք այն շփոթու-
թիւնքն, որովք կը շփոթին պարզ
մոքերն վիճասէր աստուածաբանու-
թեան շնորհիւ. եթէ նկատէք Մա-
տուծոյ նուիրելի պաշտամանց վերա-
բերեալ անվերջ վէճերն ու մաքա-
ռումներն, եթէ իմանաք, թէ կար-
ծեցեալ կրօնն որչափ կը նսեմացնէ
ճշմարիտ կրօնի մեծութիւնն ու գե-
ղեցկութիւնն, անշուշտ կը զարմա-
նաք թէ ինչպէս տակաւին կենդանի
է Մատուծոյ տեսութիւնն իւր որդ-
ւոց ոմանց մէջ ուստուածային պատ-
կերի գլխաւոր դժերն նոցա վերայ դը-
րոշմուած, և կը փառաւորէք երկնա-
ւոր Հայրն, որ այսքան ամպոց մէջն
դարձեալ արձակած է այսքան ճառա-
գայթներ :

(Օրհնեալ լինի ուրեմն, եղբարք,

օրհնեալ լինի այն լուսաւոր օրն, երբ
պիտի տեսնեմք զՄատուած դէմ յան-
դիման, պիտի տեսնեմք զնո միայն,
և մեր միտքն ազատօրէն գրկելով սոյն
ամենաբարի Լաւն՝ պիտի չուենեայ
այնուհետեւ ուրիշ առարկայ տեսու-
թեան, նոր աշխարհի բոլոր հրաշա-
լիքներն պիտի բացուին իւր առջեւ,
և պիտի գտնէ, ոչ թէ միայն հետքն,
ոչ թէ ստուերն, ոչ թէ անունն մի-
այն, այլ երկնաւոր Հօր կենդանիներ-
կայութիւնն : Վ ասն զի յայնժամ Մա-
տուած ամեն բանի տեղ պիտի բռ-
նէ. միայն ինքն պիտի երեւի հազար
և բիւր տեսիլներով և միայն իրմով
պիտի լցուին երկինն նոր և երկիրն նոր :
Ինչպէս որ անհնարին է մաքին չը մը-
տածել և բաց աչքին՝ լոյս չը տեսնել,
նոյնպէս անհնարին պիտի լինի յայն-
ժամ չը տեսնել զՄատուած : Ի՞նչ կ'ա-
սեմ. աչքն այնուհետեւ պիտի լինի
բոլորովին լոյս. հոգին պիտի տեսնէ,
առանց նայելու. իսկ ճշմարտութիւ-
նը, որ այնքան երկար ժամանակ կը
բռնուէր, այնքան յաճախ կը կորսուէր,
կը գտնուէր և դարձեալ կը ծածկը-
ւէր, ճշմարտութիւնն այնուհետեւ
պիտի բնակի հոգւոյ մէջ, որ այնչափ
ծարաւի էր, և կը հետախուզէր, մերթ
կը մոլորէր և կը հեռանար, և մերթ
կը մօտենար, բայց լիովին չէր վայելեր
Մատուածայն հոգւոյ և ճշմարտութեան
սոյն միացումն, թէ և տեւական եւ
անընդհատ, միշտ պիտի ունենայ նոյն
հանդիպման հրապոյր, նոր հանգի-
ման խանդ ու խանդաղատանք. մի-
քն, տգիտութեան տառապանք, և
եւ կասկածի ու տարակուսութեան
տանջանքէն ազատուելով՝ կենդանի
բախտութիւն պիտի զգայ, ուր ու-
թիւնն յարատեւ, ուրախութիւնն ու-
սանելու և նոր գտնելու : Ի՞նչ սոյն
նոր վիճակի փառաւոր առաջնորդ

Թիւնն մասնաւանդ այս բանիս մէջ կը կայանայ, որ մարդն, իւր նոր հայրենեաց մէջ տեղափոխուելով, տեսնելով զՆստուած այնպէս, ինչպէս որ է, պիտի նման լինի Նստուծոյ, պիտի զգայ և տեսնէ իւր սիրտն լցուած ամեն բանով, ինչ որ առատ է և զեղուն ՚ի սիրտ Նստուծոյ. պիտի տեսնէ իւր հոգին բողբոջին արդարութիւն, սէր և սրբութիւն դարձած. և պիտի հրճուի յաւիտեան, ծառայելով իւր երկնաւոր Հօր պաշտելի խորհրդոյ և անմահ դիտաւորութեց, ինչպէս կը հրճուի նոյն ինքն ամենեւ ջանիկն և ամենեւրանելին Նստուած, անսպառ հրճուանօք, իւր խորհրդներն յղանալով և կատարելով:

Նշմ առաքեալն դառնալով եւ իւրաքանչիւր հաւատացելոյ հետ իւր հոգեւոր ծննդեան վայրկենին դիմելով, որով եղեւ որդի Նստուծոյ, կը քարոզէ ու կը նկարագրէ մի առաւել մերձաւոր ապագայ, որ երկրաւոր կենաց սահմաններուն մէջ կ'ամփոփի: Իայց իմացէք, որ սոյն ապագայն երկնաւոր ապագայի վերայ խորհելէն կը ծնանի:

Առաքեալն կ'ասէ. «Մենայն որ ունի զայս յոյս անձին (յոյս տեսանելոյ զՆստուած որպէս և էն) սրբեսցէ զանձն իւր՝ որպէս և նայն սուրբ է»: Եթէ հեղինակն առաւել երկչոտ եւ զգուշացող լինէր, փոխանակ ասելոյ յոյս ունեցողն կը սրբէ իւր անձն, կ'սէր այսպէս՝ յոյս ունեցողն պարտական է սրբել իւր անձն: Իայց առաքելոյն համար Նստուծոյ տեսութիւնն այնպիսի մի անհրաժեշտ հետեւութիւն է սրբութեան, որ ամենեւին իրարմէ չը բաժնէր: Սոյն վճռական կերպով կ'ասէ նա դարձեալ. «Մենայն որ ՚ի նա (Նստուած) է հաստատեալ, ոչ մեղանէ»: Եւ ո՞վ

է այն, ո՞վ առաքեալ Յիսուսի Վրիտտոսի, ո՞վ է այն, որ բնաւ չը մեղանէ: — Ոչնպիսի էակ բնաւ չը կայ ուրեմն. եւ Վրիտտոս միայն ինքն է, որ կը կատարէ իւր տուած որէնքն: Եւ առ ճշմարիտ է այս, ինչպէս որ անկատար կերպիւ գիտեմք և կը ճանաչեմք, նոյնպէս անկատար կերպիւ եւս կը հնազանդեմք: Դու, ո՞վ սիրելի աշակերտ Յիսուսի, պարա էիր ուրեմն ասել միայն՝ Թէ նա, որ կը բնակի ՚ի Յիսուս Վրիտտոս, այնու կը հրաժարի նաեւ ՚ի մեղաց, և նա, որ ունի զմեծ յոյս անձին տեսանելոյ զՆստուած, կը պարապի, կը ջանայ իւր անձն սրբելու: Իայց գոհ եմք քեզմէն, որ տուած ես ճշմարտութեանն իւր յատուկ, ճշկրիտ և հատու ձեւն, որով միայն անկ է մեր անհաւատարմութիւնն պատժել: Դու անողբելի և անաչառ ես, և այս իսկ է մարդասիրութեան յատկանիշն այսպիսի պարագայի մէջ:

«Մենայն որ ունի զայս յոյս յանձին, սրբեսցէ զանձն իւր»: Ինչ կը նշանակէ սրբել զանձն. ինչով կարգիւնաւորի և կը գերազանցի սոյն սրբութիւնն կամ մաքրութիւնն: — Մեն բանով, որով կ'արդիւնաւորի Նստուած. վասն զի առաքեալն կը յաւելու. «Որպէս Նստուած սուրբ է»: Եւ արդէն Փրկիչն մեր յառաջագոյն առած էր. «Եղբրուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»: Եւ զնորոգեալ և անհոգեւորութիւն սրբութեան: Նոսահման է Հօր սրբութիւնն, անսահման պէտք է լինի ուրեմն և որդւոյ սրբութիւնն, որ կը փափագի իւր Հօրնմանիլ սրբութեամբ և կատարելութեամբ: Իայց հարկ է, եղբարք, նկատողութեան առնուլ

սրբութեան բուն էութիւնն : Ս'ար-
դիկ սովորաբար սրբութիւնն բառին
բացատրական և դատարկ գաղափար
կը տան : Հասարակաց մեկնութեամբ
սրբութիւն բառն կը նշանակէ ազատ
լինիլ 'ի մեղաց և 'ի սխալմանց և չը
նշանակեր բնաւ սուրբ լինիլ էական
յատկութեամբ և բնաւորութեամբ .
մարդիկ սրբութիւն բառն բացատ-
րելու համար , բաւական կը համարին
միայն մեղք չունենալն : Բայց բարոյ-
ականութեան բուն սկզբունքին նայե-
լով , ինչպէս որ լոկ պատիժէ ազատ
լինելուն մէջ չը կայ երջանկութիւն .
նոյնպէս և միայն 'ի մեղաց ազատ լի-
նելն կարող չէ սրբութիւն համարուիլ
մարդոյն : Ամեն ազատութիւն 'ի մե-
ղաց չ'ամփոփէր իւր մէջ նաեւ սրբ-
ութիւն : Ինչպէս որ մարդ միայն այն
ժամանակ կատարելապէս երջանիկ է ,
երբ տանջանքներն փոխարկուած են
ուրախութեան և հրճուանաց , նոյն
պէս և մարդն այն ժամանակ միայն
սուրբ է , երբ մեղաց եւ սխալմանց
տեղն գրաւած է սրբութիւն , այսին-
քըն երբ սրբութիւնն բնաւորութիւն
և յատկութիւն դարձած է մարդոյ :
Աւելի անհատեցէք , որ չեմ' ասեր՝ թէ
այսպէս պէտք է լինի , այլ թէ՛ իսկ և
իսկ այսպէս է : Այս'կ' ասեմ , որ մեղաց
բացասութեան մէջ անհնար է ենթա-
դրել սրբութիւն : Այսպիսի մեկնու-
թիւն հակառակ է ուղիղ բանի , հա-
կառակ է բնութեան : Ինչպէս ֆիզի-
քական բնութեան մէջ , նոյնպէս և
հոգւոյ մէջ չը կայ դատարկութիւն :
Յանցանքն , մղութիւնն այն ժամանակ
անհետացած կը համարուի հոգիէն ,
երբ նորա տեղն թագաւորած է սուրբ
բնաւորութիւն և առաքինութիւն :
Եթէ չը կայ մարդոյ մէջ սրբութիւն
և առաքինութիւն , որչափ որ ազատ
կարծէ նա զինքն 'ի մեղաց , մեք պիտի

պնդեմք , որ ազատուած չէ , այլ իւր
յանցանքն՝ ուրիշ յանցանաց և մղու-
թիւնն՝ ուրիշ մղութեան փոխուած
է . կամ աւելի պարզ ասել՝ մղութե-
նէ 'ի մղութիւն փոխուած է և ոչ մո-
լութենէ յառաքինութիւն : Արտա-
քուտ յղկելն եւ գեղազարդելն չը
նշանակէր մի իր բովանդակապէս յայլ
ինչ փոխարկել : Հիմնովին փոփոխու-
թեան համար՝ ներքին փոփոխութիւն
պէտք է : Կենաց սկզբունքն էր միայն
որ մահուան սկզբունքն տարամերժեց :
Ս'ի սկզբունքն միւս սկզբունքի տեղն
գրաւեց , այսինքն մարդոյն աւելցաւ
և ոչ թէ պակսեցաւ : Այլ ինչպէս որ
յայնկոյս աղքատութեան առաջին
քայլ մի առնել՝ կը նշանակէ դէպ 'ի
հարստութիւն երթալ , նոյնպէս չա-
րըն ջնջելու համար առաջին արիական
ճիգն իրօք ճիգ մ' է բարին ստանալու
համար : Կարճ ասեմ , հոգւոյ մէջ
պարապ կամ դատարկ տեղ բնաւ կա-
րող չէ լինիլ : Հաւատացէք , որ այն
գահն , զոր հրեշտակն գրաւած չէ ,
անշուշտ գրաւած է զայն սատանայն :
Ինչ որ բնագէտներն կը կրկնեն բնու-
թեան համար թէ բնութիւնն դա-
տարկութիւն չը սիրէր , նոյնն և մեք
կը կրկնեմք հոգւոյ համար : Ասեմք
եթէ չը կայ հոգւոյ մէջ սրբութիւն ,
անշուշտ կայ անսրբութիւն , եթէ չը
կայ առաքինութիւն , անտարակոյս
կայ մղութիւն :

«Ամենայն որ ունի զայս յոյս յան-
ձին , սրբեցէ զանձն իւր , որպէս և
նայն սուրբ է ո' կ'ասէ առաքեալն :
Սոյն իսկ խօսքերն կը բացատրեն թէ՛
կանոնն և թէ՛ շարժառիթն : Պէտք է
սուրբ լինիլ որպէս զԱստուած . պէտք
է սուրբ լինիլ , վասն զի նա սուրբ է :
Ղշմարիտ է , որ առանց յուսոյն , ո-
րուն վերայ կը խօսի առաքեալն , չար
ժառիթն միայն մտքին կամ իմացա-

կանութեանն պիտի ուղղուէր . բայց այս բաւական պիտի չը լինէր սիրտն ու կեանքն վերանորոգելու համար : Սակայն , երբ շարժառիթն յուսոյ վերայ կը յենու , ունի այն մեծ զօրութիւնն , որոյ օգնութեանն կարօտ է մեր տկար Վրամբն : Յոյսն՝ տեսանել զՎստուած որպէս և է , յոյսն , որ իւր մէջ կ'ամփոփէ ամեն բան , սոյն յոյսն կը տայ ամեն ճշմարտութեանց այն զօրութիւնն ու ազդեցութիւնն , որով կարող են զինուորիլ : Վստիկ հաստատունն յոյսն կը կացուցանէ ըզմարդն մտօք 'ի ներկայութեան և քննականութեան անարստին Վստուծոյ , որ սուրբ և կատարեալ է խորհրդով և գործով , և որոյ կատարեալ տեսութեանն անշուշտ օր մի պիտի արժանանայ մարդն : Վսն վայրկեանէն երբ կը յուսայ մարդ , կ'ապրի Վստուծոյ քաղցր ակնարկութեան տակ , 'ի տան նորա , 'ի ներքոյ ոտից նորա : Սարդն , յուսոյ թռիչներով փոխադրուելով 'ի բնակարանն սրբութեան , հոգեպէս իրեն ընկերակից ունենալով հրեշտակներն , փառաւորեալ սուրբերն , իրեն պէս տակաւին կենաց պատերազմին մէջ շահատակող մարտիրոսներն , ամեն կերպով կը քաջաբերուի սուրբ լինիլ , որպէս զի արժանի լինի այն աներեւոյթ , բայց ըզգալի հաղորդութեան : Յուսով ընդունած մարդոյն ամեն բան կը ներշնչէ սուրբ եռանդ և սուրբ նախանձախնդրութիւն : Վմենայն ինչ կը ներշնչէ նմա խորին զգուանք ընդդէմ ամեն բանի , ինչ որ սուրբ և անարատ չէ աստուածային սրբութեամբ : Վմենայն ինչ կը բարձրացնէ , կը կրթէ և կ'ազնուացնէ մարդոյ յօժարութիւններն ու միտումներն : Վմենայն ինչ կը կրթէ , կը վարժէ նորա բարոյական ճաշակի նրբութիւնն ու նորա հոգե-

ւոր շջաւիման անօտուութիւնն : Վմենայն ինչ կը կրթէ զնա իւր երկնաւոր կոչման ունակութեան մէջ և անդադար կը վերընթելէ սոյն տեղափոխեալ ծառի վերայ , սոյն յաւիտեան թօշնեալ դագաթին վերայ , տերեւաշատ և անմահ ոստեր :

Վրժմ , եղբարք իմ , թող տուէք ինձ առ վայր մի ելնել իմ բնաբանէս , բայց իմացէք , որ բնաբանէս ելնելով պիտի չ'ենեմ ընդ նմին և յՎետարանէն : Սուրբն Յովհաննէս , ձեր անձն սրբելու համար , կառաջարկէ ձեզ մի ազնիւ և հզօր շարժառիթ , 'ի բերեցէք ինձ մի այլ շարժառիթ եւս իմ կողմէն յաւելուէ : Որդիք Վստուծոյ , իբրեւ ինքնասէր և նախանձոտ ժառանգորդներ կարող չէք դուք վաշելել որդիութեան արտօնութիւնն , և այս իսկ պատճառաւ այլ ևս պիտի չը պատկանի ձեզ նոյն արտօնութիւնն : Դուք կը հառաչէք յաւիտ (և այս նշանաւ կը ցանկամ ճանաչել զձեզ) դուք կը հառաչէք , դուք կ'ողբաք , որ արտօնութիւն կամ առաւելութիւն կայ , այսինքն , փոխանակ ամենեքեան արժանանալու որդիական պատուոյն , սակաւք կ'արժանանան : Դուք կը ցանկաք , դուք կը փափաքիք ամենուն հաղորդել նոյն արտօնութիւնն , ամենուն բաժին հանել , ամենուն մէջ սփռել տարածել : Եստուած իսկ դրած է ձեր սրտին մէջ սոյն ազնիւ բաղձանքն , որ ամենէն առաջ Վստուծոյ սրտին մէջ էր , որ չը հանդուրժելով միայն ինքն վայելել իւր անձառ բարիքն , հաճեցաւ հաղորդել զայն իւր ստեղծուածին : Որդ՝ ձեր սոյն բաղձանքն լցուցանելու համար մի ճանապարհ կայ ձեր առջեւ - Սրբեցէք ձեր անձներն :

Դուք գիտէք որ ես կը խօսիմ Վետարանին համաձայն , ես կը կրթի-

ներմանոյն իսկ Հիսուսի Քրիստոսի խօսքերն, որ ձեզ ասաց. « Ենպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է 7: Սաղ. Ե. 16: Եւ կը կրկնեմ ձեզ Հիսուսի խօսքերն, զորս շատ անգամ, շատ ձերեւոյլ և շատ թախանձանքներով խօսեցաւ նա ձեզ: Եւ ազգեցում թեան համար այս բաւական է արդէն, որ Հիսուսի Քրիստոսի խօսքերն կը խօսիմ: Իսկ նոյն իսկ մեր բացատրած բնաբանէն գոգցես առարկութիւն մի կենէն Փրօկ չի պատուէրին դէմ, և խիստ շահաւոր է սոյն առարկութիւնն յարուցանելն, վասն զի բացատրելով խնդիրն աւելի կը պարզուի: »

Եւստեն թէ՛ ինչպէս սրբենք մեր անձն այլոց օգտին համար, ինչպէս դրաւենք մարդիկ մեր գործքերով և բազմադնենք Եստուծոյ գերդաստանն: Այս ապաքին ասուած է թէ՛ աշխարհն, որոյ մասն կը կազմեն մարդիկ, աշխարհն չը ճանաչէր զմեզ, այսինքն չը հասկնար մեր խօսքն ու գործքն: Եւստ հոգիներու կոչումն ուղղակի կը վերաբերի Եստուծոյ, կը վերաբերի նորա բանի քարոզութեանն և գուցէ մեր աղօթքին, բայց ոչ երբէք մեր գործքին և օրինակին:

Պատշաճ կը համարիմք այս տեղ մի պարզ բայց նոյնպէս և խորին ընտրութիւն առնել, զոր դժբաղդաբար շատ քրիստոնեայք՝ առնել չը գիտեն: Ի՞նչ է աշխարհի չը ճանաչածն Եստուծոյ որդւոց նկատմամբ, եթէ ոչ այն սկզբունքներն, որով նոցա կեանքն կ'ուղղուի կամ կ'առաջնորդուի, եթէ ոչ այն զգացումներն, որով կերպիւ իւրիք, նոր հոգի կազմուած է նոցա մէջ: Ի՞նչ է աշխարհի չը ճանաչածն, եթէ

վարմունքն որք ուղղակի Եստուծոյ որդւոց բարոյական վիճակէն կը ծագին և յարակից են իրենց աղքերակին, բայց իրենց աղքերակին նման անձանթ չեն աշխարհի: Եթէ սոյն երկու իրերն ընդունիր, այն է սկզբունքներն և գործքերն, որք հեռուէն ցոյց կը տան նոր մարդն, կը մնայ այնուհետեւ կենաց և բարուց ամբողջութիւնն, որ լիովին յայտնի է բովանդակ աշխարհի: Եւ կը սխալիմ, եղբարք, նաեւ սոյն ամբողջութիւնն իսկ գերբնական է և անխմանալի: Թէ և սկզբունքներն և գործքերն առանձին առանձին եւս սիրելի են, բայց իրենց սերտ միութեամբ կարտագրեն այն արդիւնքն, որ յարմար շարժառիթ է նոր մարդոյ կազմութեան: Աշխարհի համար թէ՛ արդիւնքն և թէ՛ շարժառիթն անհասկանալի կը մնան: Աշխարհն չէ կարող ըմբռնել սոյն բարոյական սքանչելիքն, ուստի և, Էւետարանի խօսքով աւսենք, չը ճանաչէր Եստուծոյ որդիքն: Վերջապէս, եղբարք իմ, ամեն տարեք, որոց միութեամբ քրիստոնեական առաքինութիւնն կը կազմուի, այս տարեքն են, զորս աշխարհն իսկ առաքինութիւններ կ'անուանի: Առաքինութիւններն աշխարհի ճանաչած առաքինութիւններէն կը տարբերին միայն իրենց սկզբան սրբութեամբ և յատկութեան կատարելութեամբ: Երբ որդւոյն կէտէ նայելով մի և նոյն ունակութիւններն, մի և նոյն սովորութիւններն են, իորք մարդն պատուաւոր կը կացուցանեն, ընկերականութիւնն ապահով և քաղցր, կեանքն՝ խաղաղ և երջանիկ, Սի եւ նոյն յատկութիւնքն և բարուց ազնուութիւնքն են, որք երջանկութիւն են մարդոյ, եթէ ունենայ զայնս յաւուրս փորձանաց և աղէտից: Սի և նոյն զօրութիւնքն են, որք յառաջ

կը մղեն զմարդկու թիւնն 'ի ճանապարհս ճշմարիտ քաղաքակրթութեան և հաստատուն յառաջագիմութեան : Ս'ի և նոյն բարոյական գեղեցիկութիւնն է , որ մարդոյն իւր ճշմարիտ արժանաւորութիւնն ծանուցանելով կը պատուիրէ նմա յարգել իւր անձն , և երբեմն կը հրաւիրէ զնա որոնել գեր 'ի վերոյ քան զինքն մի առաւել արժանի առարկայ յարգանաց : Ս'իով բանիւ , սոքա են այն կատարելութիւնքն , զորս առաքեալն այսպէս կը թուէ . « Ար ինչ ճշմարտութեամբ է , որ ինչ պարկեշտութեամբ , որ ինչ արդարութեամբ , որ ինչ սրբութիւն , որ ինչ սիրով , որ ինչ համբաւ բարեաց , որ ինչ քաջութեամբ , որ ինչ գովութեամբ » : Փիլ , Դ . 8 : Ղշմարիտ է որ սոյն առաքինական կատարելութիւններէն մի քանիսն , լ'ւետարանի և քրիստոնէի լեզուաւ , իրենց ծնունդ տուող որոշիչ սկզբունքէն փոխ առած են այս կամ այն ինչ մասնաւոր անունն , որոյ բուն գաղափարն կամ իմաստն անհասկանալի կ'երեւի աշխարհի մարդոյն : Իսկ նոցա իսկական յատկութիւնն , նոցա էութիւնն անփոփոխ է և իրօք նոքա դարձեալ սիրելի են : Օրինակի համար , մարդասիրութիւնն , որ երկբայական է սոյն անուամբ , ոչ այլ ինչ է իւր գործքերով , եթէ ոչ բարութիւն , որ սիրելի է : Խոնարհութիւնն , զոր կը մերժեն աշխարհի մարդիկն , ոչ այլ ինչ է , եթէ ոչ համեստութիւն , պարկեշտութիւն , որ սիրելի է : Ողորմածութիւնն , որոյ անունէն կ'երկնէին , ոչ այլ ինչ է . և եթէ ոչ գթութիւն քաղցրութիւն , մերողութիւն , որ սիրելի է : Սկզբունքն կարող է ատելի լինիլ . բայց 'ի ժամանակին արդիւնքն ոչ երբեք : Լ'յս ամենն , երբ ճշմարիտ է , երբ հաստատուն է , երբ բարձր է , երբ պարզ է

և բնական , երբ ինքնակամ է և ինքնայորդոր , անշուշտ իւր կատարածն է միութիւն պատուոյ և սիրոյ : Ղը ճշմարիտ քրիստոնեայն , որչափ որ աւտուի , անշուշտ 'ի վերջոյ սիրելի կ'երեւի և սիրելի քան զամենայն մարդիկ : Այստեղիցն , որք կը պարտւրէին զնա իսպառ , կը նուազին և միայն նորա համոզմանց շուրջ կ'ամփոփին : Ս'արդիկ գուցէ նորա համոզմանց դէմ կը զինին , բայց նորա կեանքն պատուով կը յիշատակուի : Եւ մտածման արժանի կէտ մի կայ այստեղ , որ շատ անգամ սոյն պատիւէն իսկ զգուշանալու է . վասն զի կարող է պատահիլ որ մի վտանգէն միւս վտանգի մէջ ընկնի քրիստոնեայն . նախատանաց որոգայթներէն՝ սահիփառաց որոգայթներուն մէջ . որովհետեւ քրիստոնէական յանրաւի նախատուած առաքինութեան յարգն ու համարումն խիստ ընդհանրական է և ազդեցիկ . թող այս յարգն ու պատիւն ակամայ լինի և համարեալ թէ բռնի կորզուած . թող սոյն վտահուլութիւնն համակրութեան բնութիւն ու յատկութիւն չունենայ . այս կարող է իրօք այսպէս լինիլ , ինչ ինչ պարագայից մէջ առ ժամանակ մի , և շատ պարագայից մէջ միշտ և հանապաղ : Սակայն , եղբարք իմ , քրիստոնէական կենաց անուշահոտութեան ծաւալումն աւելի թափանցիկ է : Չը կայ այնպիսի կարծր գոյութիւն , որուն վերայ առաւել կամ նուազ չ'ազդէ սոյն անուշահոտութիւնն : Ընհարին է , որ մարդ երկար ժամանակ կարենայ դիմադրել այնպիսի մի հղոր հլրապուրի , ինչպէս է քրիստոնէական կենաց անուշահոտութիւնն : Շատ անգամ մարդիկ իրենց կարծելէն առաջ գրաւուած են : Եւ ինչպէս որ Յիսուսի վերայ իրականացած անա-

րատ սրբութեան տեսութիւնն քրիստոնէայք կը կազմէ, նոյնպէս նուազ, բայց իրական սրբութեան տեսութիւնն է, որ կը պատրաստէ քրիստոնէայքն և տախաւ առ տախաւ կրնտէլացնէ Յիսուսին նայելու: Դուք կը աեսնէք ուրեմն, ո՞վ երջանիկ աշակերտք Յիսուսի, դուք կը տեսնէք որ թէ և աշխարհէն հեռի, կազդէք աշխարհի վերայ, և սուրբ Պօղոսինը ման, դուք էք միանգամայն «Իբրեւ անծանօթք՝ և ծանուցեալք . . . իբրեւ տնանկք՝ և զբազումս մեծացուցանողք» Բ. Կորն. 2. 9-10: Դուք կը տեսնէք, որ ոչ մի բան չարագելուր զձեզ, այլ անհրաժէշտ պարտք կը դնէ ձեր վերայ, որ ձեր անձն սրբէք ՚ի տես ձեր նմանեաց, որք, շնորհիւն Աստուծոյ, պիտի լինին ձեր գործոց աշակերտ: Այս օգուտն պէտք է որ միանայ, իբրեւ ստիպողական շարժառիթ, այն ամեն օգուտներուն հետ, սրբ կը պարտաւորեն զձեզ ձեր անձն սրբելու: Այս ևս անտարակոյս կարող եմ ասել, որ եթէ դուք ձեր նմանեաց օգուտն աչաց առջեւ չունենաք, ձեր սրբութեան գործն կը յապաղի և զգալի կերպիւ կը վտանգուի Դուք կարօտութիւն ունիք սոյն շարժառիթին, որ ՚ի հարկէ գերադոյն չէ, բայց աւելի մօտաւոր է և աւելի անընդմիջական կերպիւ զգալի, քան թէ այն շարժառիթն, զոր Սուրբն Յովհաննէս կ'առաջարկէ ձեզ իմ բնաբանիս մէջ: Եւ այն իսկ Սուրբն Յովհաննէս կը վաւերացնէ և կ'ապահովէ մեր ասածներն, երբ կը վճռէ. «Որ ոչ սիրէ զեղբայր իւր, զոր տեսնէ, զԱստուծոյ, զոր ոչն ետես, զիմորդ կարիցէ սիրել» Բ. Յով. Դ. 20:

Բայց ահա մի այլ երաշխաւոր, որ ՚ի վեր է քան զՅովհաննէս: Յիսուս Քրիստոս իւր աշակերտաց հա-


մար խօսելով կ'ասէ. «Այս սուրբ առնեմ զանձն իմ վասն նոյա» Եւ. Ժ. 19: Կռեցէք այս խօսքն, եղբարք: Այս եւս է ասացէք դուք, որ սոյն խօսքերն արտասանողն ինքն Սուրբ էր և Արդար: Այս երբ կը տեսնէք, որ նա սուրբ կ'առնէ իւր անձն իւր աշակերտաց համար, կը համարձակիք դուք արդեօք ասել, որ դուք կ'աշխատէք ձեր անձն սրբելու ձեր աշակերտաց համար: Այսին զի աշխարհի իւրաքանչիւր որդին աշակերտ է, Աստուծոյ որդիէն ծնուած, որ իրեն մերձաւոր է: Այս իւրաքանչիւր քրիստոնէայ առաքեալ է, որովհետեւ քրիստոնէայ է:

«Այն, կ'ասէ աստուածային ձայնն, վայ մարդոյն այնմիկ, յոր ձեռքն պայցէ գայթակղութիւն» Աստ. Ժ. 7: Բայց քանի որ գայթակղութեան մասին մեր ասածներն ճշմարիտ են, մի թէ կարօղ չեմք սոյն խօսքերն դարձնել նաեւ այսպէս, «Այն մարդոյն այնմիկ, որ ոչ հաստատէ զեղբայր իւր» Բ. Յով. Դ. 19: Եղբարք իմ, բարոյապէս առնելով, ի՞նչ կը նշանակէ չը չինել, չը հաստատել, եթէ ոչ քան դել, կործանել: Բայց յայտմանէ ի՞նչ պէս կարող է քրիստոնէական սիրտ մի ստուն արեամբ և անտարբերութեամբ ասել. «Իմ գործս կամ պաշտօնս է չը կորուսանել բնաւ, իսկ արգելոյ՞ որ չը կորնչին՝ իմ գործս չէ» Բ. յայտման մը տաճե՞ն անգամ սպանութիւն է: Կայնէն մի կայ այսպէս մոտաճող քրիստոնէին մէջ, և թող չը զարմանայ բնաւ, եթէ օր մի լնէ Յաւիտեականին աշխատանքն. «Ուր է եղբայր քո . . . զի՞նչ գործեցեր զայդ» Եւ. Դ. 9-10:

Պիտի ունենայ արդեօք առաւել վստահութիւն և իրաւունք քան ըզնախկին մարդաստանն և պիտի պա-

ստախանէ՛ արդեօք առաւել քան զնա
համարձակութեամբ, « Սի թէ պա-
հապան իյեմ եղբօր իմոյ Դ : Լ, յն, ան-
տարակոյս պահապան էիք դուք : Լ-
յն, անտարակոյս, իւրաքանչիւր որ
պահապան է իւր եղբօրն : Ս, որչափ
գեղեցիկ է այս պաշտօնն, այս հան-
րական առաքելութիւնն, և որչափ
պարզ է միանգամայն : Լ՝նչ կը պա-
հանջուի իւրաքանչիւրէս, եթէ ոչ
առնել մարդկանց սիրոյն համար այն,
ինչ որ պարտաւոր էինք առնել Լ՝ն
տուճոյ սիրոյն համար, նոյն խօսք մեր
միակ սիրոյն համար : Լ՝նչ կը պահան-
ջուի մեզմէն, եթէ ոչ ընկերին բարիք
առնելով, նոր շարժառիթ ունենալ
նոյն խօսք մեր սեպհական բարին յա-
ռաջոյնելու : Վ, ասն զի, լաւ խորհե-
ցէք, ոչ թէ մեզմէն կը պահանջուի,
որ սքողեմք զմեզ գէժ՝ յանդիման մեր
եղբարց, ծածկեմք նոցա առջեւ մեր
տկար կողմերն և յայտ յանդիման կա-
ցուցանեմք մեր գորութիւնն : Ա, այս
չէ մեզմէն պահանջուածն, այլ
այն կը պահանջուի մեզմէն, որ լի-
նիմք մեր եղբարց առջեւ այնպէս,
ինչպէս որ եմք. թողումք, որ նոցա
նայաւածքն թափանցէ մինչեւ մեր
սրտի խորքն. այնպէս որ նոքա առիթ
չունենան մեր արտաքին մարդոյն հան-
գէտ ծածկեալ և կասկածաւոր մարդ
մի ևւս նշմարել մեր մէջ : Բայց իրօք
խօս այնպէս լինիմք, ինչպէս պարտա-
կան եմք լինիլ : Գ, անամք այնպէս լի-
նիլ : Լ, թէ Զանամք, Զանքն արդէն
արդիւնք է : Լ, յստէս է բարոյական
սկզբունքն : Գ, երբ և եռանդուն բազ-
մանքն արդէն իրականութիւն մ՝ է :
Լ, ով որ կը փախաբի կեանքով սուրբ
լինիլ, նա արդէն, ըստ չափու ինչ,
սուրբ է սրտիւ : Խօսելու ձիրքն, ու-
սուցանելու տաղանդն յառաւել է ու
մանց միայն. բայց գործքով առաքե-

լութիւնն հասարակ է ամենուրն : Լ,
իմաքար կատարեցէք ուրեմն ձեր գոր-
ծով առաքելութեան դաշտօնն : Սրբ-
բեցէք ձեր անձն այլոց շինութեան
համար : Արթեցէք զձեզ մարգասի
րութեան մէջ նոյն խօսք մարգասի
թեամբ : Սիրեցէք, օրհնեցէք, պա-
ղատեցէք, որպէս զի այլոց ուսուցա-
նէք սեր, օրհնութիւն, աղօթք : Բարոյ
և ծարաւ ունեցէք ձեր եղբարց փրկ-
կութեան համար : Լ, նազ եղէք նու-
ցա հոգւոյ սրբութեան մասին Լ, ու-
սուճոյ սիրոյն համար : Վրեցէք զնու-
սա սրախ և մուծէք այն աստուա-
ծային գերդաստանի շրջանակին մէջ,
ուր մտածէք դուք շնորհօք փրկչին :
Լ, նգարձակեցէք, լայնեցուէք սոյն ջր-
ջանակն, բազմացուցէք սոյն գերդաս-
տանն, և հոգեւոր ու գերազոյն իմն
խմստիւ կատարելով նորա պատուե-
լին, որ միանգամայն Լ, բարիքն է մար-
մնոյ և Ստեղծիչ հոգւոյ՝ ԱձԵՑԻՔ ԵՒ
ԹԱՁՄԱՑԱՐՈՒՔ : Որպէս զի, օր մի,
եղբայրական հոգիներու ընկերութեմ,
կարող լինիք երեւիլ յոռո մարգասի-
րութեան աթոռոյն և ասել ձեր հա-
տարակոյ շօրն, ոչ միայն իբրեւ հայ-
րեր, կամ իբրեւ ազգականներ և բա-
րեկամներ, ոչ միայն իբրեւ հովիւներ,
այլ իբրեւ հասարակ մարդիկ. « Լ, հա-
ւասիկ, Տէր, ես եւ մանկունք իմ,
զորս ետուրն ինձ Դ : Լ, բ. Բ. 13 :



ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՆՑ

(Հարունակութիւն, տես թիւ 41)

Արդեօք ծերունին եւ տիկին պատաւ երբ բերան բանայ այսօրն սուղով կանցնի, քաւ լիցի. երկար կը խօսէ և բաղդատելով ու համոզմամբ զգալի կրնէ, թէ բռնութեան դարձրու մէջ ճշմարիտ երջանկութիւն եւ սուրբ սէր կայ եղեր. իսկ արդ թը շուառութիւն և վիշտ տուններէն կրու կըսի, ծերուկ տիկին, այլեւոր մարդ, դաստիարակութեան, տնտեսական դաստիարակութեան մէջ կը գտնէ եւ ջանկութեան աղբիւրի սիրուն վտակ, բռնութեան դար ըսելով արդի ազատ կարծուած դարուս նկատմամբ է կըսէր տիկին այն բռնութիւն չէր բռնութիւն, այլ պարկեշտութիւն, ընտանեկան ապահովութեան հսկողութիւն ինչպէս որ այս դարը չէ ազատութեան դար, այլ միութեան սոսնձակոտոր վրինջիւն. բռնութեան դարու մէջ ազբատ և հացի կարօտ որ չ'կար, ինչպէս որ այժմ հարուստ և անկարօտ մէկը չ'կայ. տնտեսական խնայողութեան և բարեխառն կենաց մէջ կապրէին բռնութեան ատեն մինչ արդ կը ծաղրեն խնայողութիւնն, բարեխառն չափաւորութիւնը, կիծիւթեան անուիր կը կրէ. սէր ու խաղաղութիւն և այն տեւողական էր բռնութեան ատեն. իսկ արդ խաբէութիւն է, վէճ անոր հետեւանք և վերջ անհաշտ ատելութեան կնիք, բաժանումն, դեռ չ'միացած ատելութիւն, դեռ սէր չ'հասած, այն ատեն իւրաքանչիւր մարդ գործի արդար վաստակի կը դիմէր առաւօտ կանուխ, երեկոյին ուղղակի տուն կը վազէր իւր սիրտ իւր սրտի

հատորները գրկելու, գգուելու, եւ սիրով անոնց հետ միանալու. զի իւր տիկին մայրը մեծ սիրով խոհանոց կ'իջնէ, իւր սիրուն փայտիկի օրիորդին հետ կեփեն կը պատրաստեն, զի գիտեն որ շուկայի մարդը երեկոյին լի սիրով իրենց գիրկը կը դիմէ, ուստի իրենք ալ ձեռք ձեռքի տալով սիրտ սրտի կապելով կեննեն գործի իրենց թեթեւ և անհարկադրելի դործով զօրաւիգ սատար կը հանդիսանան իրենց մարդկանց. ո՛հ, վստ ևւ սատանայի ցանած որոմն իրենց մէջ տեղ չ'ունի, իմն է, քուկդ է, ըսելով. կամ ես ընեմ, դու ըրէ, հարսն կեսուրէն կը պատկառէր, իբրեւ մայր մը կը յարգէր. ու կեսուրն իբրեւ իւր հարազատն կը սիրէր ու կը մեծարէր. հարսի քօղը իւր երրորդ որդեծնութեան հետ կը վերնար. կեսուրի սէրը հարսէն մինչեւ գերեզման կը տանէր. Ի՞նչ երջանիկ էր այն բռնութեան օրերն, որ փեսան հարսի սրտին վրայ սոպահսվ էր, հարսը փեսին իսկ արդ ո՞րը որին, ո՞վ կը հաստատէ. Բռնութեան դարու կանանց զարգը ոսկի, արծաթ, աղամանդ և մարգարիտ էր. ու օր աւուր վրայ գէթ իբրեւ փոքրիկ տոկոս գլխուն վրայ պարանոցէն կախ և բազուկներուն կապած կ'աւելնար. այս ազատ դարուս մէջ կանանց զարդն թժմուկի փոխուած է. աս աւուրն վաղը չըլար, առանց հին նալու հին կը համարուի. չը հագած կը կտրտի. խեղճ Էւրոպան մեզմէ կառնէ ծխան. մեզի կը ծախէ արամն. ահագին մաքրիւններ կը դառնան կրկնապառեն մեր դրամն. Արդեօք պիտի սթափին մեր սիրելի մայրեր, արդեօք պիտի դգաստանան մեր ազնիւ քոյրերն. արդեօք պիտի զղուին մեր օրիորդներ. թէ ի՞նչ է մտաւն. Ինչո՞ւ մեր բանականութիւնն, մեր կամք,

մեր երջանկութիւնն և գրամբ ուրիշին տորուի և գերի կրնեմք, անոնց նմա ներու համար սրարգապէս կապիկ կը դառնամք: Այս տեղ թող ներեն մարդիկ, այն մարդիկ կը վատաբանեմ, որ իրենց հարց գգեստով չըմնացին, տա փառ, չակէտ հագնելու յոժար երեւցան և հագան. որով և կանայք ֆիւտան, շապխան եւ զեցին, ուզելով օր աւուր աղքատացան, բայց տեսակ մի մոլութիւն կամ ջրգող (սակայ) աստ լինելով դարձեալ կուզէ, կուզէ ու կուզէ վերջը կամ զոյ է կամ. . . : Բանութեան դարու կանայք լաւ չուխայէ. դամասկեան բեհեզէ գգեստներ ունենին. Ո՛հ հարս մը իւր անուշահոտ հալաւն այնքան սիրով կը վայելէր և ասդ իւր դստեր հալաւ ալ կը լինէր. մինչդեռ այսօր հարսի մը հաբածէն կ'իմացուի թէ ո՞ր աւուր հարսն է. ու անգութ աչքերը առանց անոնց վիճակը տեսնելու, ու կարեկցելու կը բամբասեն հին մտաւայով հին շապխայով դուրս ելէր է. տնտեսական դատարարակութենէ զուրկ մոլութեանց գերիներ կը բամբասեն կը հեգնեն. մինչեւ իրենց վիճակին կը հասցնեն. Ի՛նչ է արդեօք այս դարուս այս վայելուչ պճնումը, իբրեւ մոլութենէ սթափած իբրեւ կին մը որ ընտիր ճաշակ ունի, դատողութիւն ունի և վայելից արժէք գիտէ. այն վայելից արժէք. (զի այն կինն որ վայելուչ հագնելու ճաշակ չունի, նա ընկերական աշխարհին ոչ ինչ օգուտ կը գործէ. կամ բոլորովին անկիրթ է, ճաշակ չ'ունի, կամ խալառ երեւա կայութեան տուած է ինքը զինքն, երկուքն ալ վտանգաւոր են:) Յաւօք սրտի պիտի հարցնենք ու նա յանդիմանելով պիտի պատասխանէ, և մեր կարմրելով պատասխան պիտի ընդունիմք ու գոհ պիտի լինիմք:

Կանանց կուրծքն ձեւի բերող հագնւան, դէմքը վայելուչ ցոյց տուող և կեղծ գեղեցիկ ընող թիւնաւոր ներկեր, փոխ առած թռչող բայն մազեր, չընդգգեստի տակի չընանակաւոր փոկերը, աւելորդ գետին աւելող լուսած շապիթը. չընդգգեստի չափազանց երկայնութիւնը, վրայի ազգի ազգի ցնորական փոթիկները. չաբէթի եզերաց սիմէ կամ բոժոժէ ծոպերը, շապիթն, անօր կեղծ զարդերն, անոնց մէջ վայելութիւն կայ թէ ոչ, նա պիտի պատասխանէ, թէ ոչ վայելութիւն է և ոչ զարդ, այլ յիմարութիւն է և մոլութիւն. սրարգապէս անտեսական դատարարակութեան լուսոյ պակասութիւնն է, որ այս խաւար մեր մտաց մեր սրտին վրայ իջեր է, վայելք է կըսենք ու առանց կարմրելու կը հագնենք, վայելք ճաշակ պարզութեան մէջն է: Ճաշակ ունեցողն աստղական կամ իմաստութեան արձանի շապիթն իրէն բաւական կը համարէ. ինչպէս ըսի, թէ որ ճաշակ ունի իւր պարզ շապիկի ծալքերը անգամ սիրտ և աչքը կ'ընան որտալ, իսկ թէ ոչ, ոչ չար, ոչ ձեւ տուող գաղապար, և ոչ այլ ինչ կրնան աչքեր ու սիրտ խաբել, զի խաբել վատի գործ է. թէ որ վատութիւնը յանձն առնէ մէկ կին, ալ իրէն համար վատ, ընկերական աշխարհի զղուանք բերող մարդ չառ: Թէ որ նպատակա ներէր հոս անոնց ալ բաւական բսելիք ունէի, բայց ուրոշած եմ, որ մեր աւերման բռն արմատին հետ կամ մեր երջանկութեան սուղնորդին կանանց հետ խօսիմ. ուստի անոնք կը թողում: Ես իմ սիրելի մարց, պատուական քերց ու ազնիւ օրիորդաց վայելուչ զարդ տււողական ձեւը չեմ մերժեր, չեմ խօսեր, թող ունենան ինչ որ իրենց պատկան և վայել է, թող աղամանդի մէջ

ծմբան անոնք՝ սրտնոր որ լի ու լի ծոխա-
թեան մէջ կ'ապրին, իրենց առատ ե-
կամուտի աղբիւրը կը ներէ, և իրենց
պարտականութիւն կատարած են, այն
է իրենց ինկած բաժին կարօտելոյ կո-
տան արդար մատակարարութեամբ, և
ուելի սիրուն այն ծանրագին ու
լուսաւոր զարդուց տակը ծանրութիւն
մը և խայթ մը կը դրան և աղնիւ սիրտ
մը կը կրեն, այն է կը դառնան որ
մի գուցէ անխախտիզ զարգերով կա-
րօտելոյ սիրտը խոցեն, տրտուածի ա-
ռիթ տան, ուստի և խիստ դժուար-
թեամբ կը գործածեն, իբր օտարի և
ոչ թէ իրենց սեփական կը վայելեն Թէ
որ միջակ է, թող իր զարգերն տկի լի-
նին ոսկիով թող պճնի, աչքը ծոխին
վրայ դնելով թող տնտեսական հաշիւ
ւէն չ'ընդի, որով և չոր հայի կարօտ
չը լինի, օրական ապրուստն եթէ տե-
ղեն է, թող արծաթով զարգարուի, ու
կին ու աղամանդ իւր երկրին և իւր
կլիմային խորդ թող կարծէ: Մեր հայ-
րենեաց այսինքն Տաճկաստանի ճար-
տարութիւն, տաճկաստանի արուես-
տին, և տաճկաստանի ապագայն ե-
րաժշատորոջ զարդ, հագուստ, ըզ-
գեստ սիրով առնենք սիրով վայելենք,
և ոչ թէ Տաճկաստանին մահ սպառ-
նացող, դրամը քաշող, ոչ ինչ խայ-
ծով զմեզ որսացող բաներու ետեւէ
ըլլանք: Ո՛հ գիտութիւն մի է, իմ
մայրեր, ձեր նորաձեւութեան դէմ
աչք գոցել, յիմարութիւն մի է, իմ
պատուական քոյրեր, նորաձեւութեան
սիրահարելիդ, ո՛հ և մահ է ձեզ ու
չքաւարութեան ճամբայ, աղնիւ օրի-
որդներ, ձեր նորաձեւութեան կամք
տալ, ճշմարիտ կըսեմ, ու միայն Աս-
տուծոյ զարհուրէի աթոռին ձեռքս
կ'երկնցնեմ, ու ձեզ կըսեմ, օր մը այն
եկած հասած է այն օրն որ դուք ձեր
նորասիրութեան, նորաձեւութեան

ունայն զարդուց մղութեան պատիւը
կրէք, կը հառաչեմ ու մարգարէի խօս-
քը առաջ բերել չեմ ուղեր, որ կըսէ.
պիտի ըսեն մեր հացը ուտենք մեր լա-
թը հագնենք մինակ քոյ անունը մեր
վրայ ըլլայ, տն ալ ոչ մէկ կամ երկուք,
այլ եօթ կինը մէկ մարդ պիտի բռնեն,
դուք սիրելի մայրերս, դուք պատուա-
կան քոյրերս, դուք փափկիկ ապերճա-
նիկ աղջկներ, հայ կարօտութեան և
ջուր սովու խմելու հորկը ձեր ձեռ-
քով կը հրաւիրէք, արգեօք տնտեսա-
կան դատարարակութեան հաշիւ կա-
տա՞ք, արգեօք մայրերը իրենց սիրելի
զուակաց խրատ կը խօսին, թէ փոք-
րիկ դրամը ժողովուն գորակայի,
փոքրիկ ծախք մը այս ինչ և հազար և
մէկ փոքրիկ ծախք, որոնք Եւրոպայ
գանձ կը դիպեն և մեր տունը տեղն կը
վեցնեն, արգեօք մայրերը երբէք ի-
րենց սիրելի զուակաց զգալի կընեն
անոնց այն ժժմանքներն, այն մօտա-
լուսած որ և խցէ գգեստ եւ զարդ-
լուրջ կերպով անոնց ոչնչութիւնը և ա-
նոնցմէ ծագած անհուն վնասը աչքի
առաջ կը դնեն: Ո՛հ ապաքէն ոչ ինչ
նորաձեւութեամբ երիտասարդաց վրա
տահութիւնը կը կորեն, ալ ամուսնա-
նալու սուրբ սէրը կը մերժեն, ցոյի կե-
նօք անսուբբ սիրոյ գիրկը կը գիմեն,
ո՞վ է ասոր պատճառն, մօտան, Այո՛
մօտան, ղի նա այնպէս ալիք մըն է, ու
բուն վերջ չը կայ, այնպէս փաղաքուշ
փարդ մի է, որ սիրահարն ձեռքէն ձը
գել չ'ուզէր, ուստի երիտասարդ մը
պիտի մոտածէ անշուշտ, թէ մօտան
յարգեր է այս ինչ օրիորդն և միշտ
մօտա կըսէ ու կըմայլի, ևս այն ալիք
փշրելու ուժը չունիմ, նա ալ այն վար-
դը ձեռքէն ձգելու սիրտ չունի: Ի՞նչ
ընեմ, եթէ առնեմ, կամ ես ղինքն պիտի
խաբեմ, կամ ինքն ղիս պիտի խաբէ:
Մայրերն, դատարարակեաց մայրերն

խմհետս պէտք է իրենց օրիադաց, իրենց պատանեկաց բուն ու այս ճրջ մարտութիւն հաստատուն թէ՛ թէ որ այս աշխարհիս մէջ ճշմարիտ և իրաւ կան երջանկութիւն մի կայ օրինօք եւ ազատ երկու սիրտ իրարու փոխադարձ առաւելութեամբ իրարու սէր և հաւատարմութիւն ունենալն է. այսինքն երբ կայս մը իւր անբիծ զարգով ձեռք կ'երկարէ զուարթ և մարտութիւն սիրող երիտասարդի մը, և նա իւր ձեռքով սիրուն և հոգին անոր հետ կը կապէ Աստուծոյ սեղանին առաջ, իրարու հետ ապրիլ սիրով և իրարու օգնելով մինչեւ գերեզմանի մութ եւ պաղ դուռն, որքան որ այս երջանիկ ծամբու վրայ արկածներ ալ տեղան ահմեց վրայ, դեռ անոնք աննկուն կը քալեն: Ո՛հ, երանի թէ այս սուրբ երջանկութեան հետ տնտեսական դատարակութեան հնազանդութեամբ օրքան զօր ձօնանան, և ընկերական դատարակութեամբ սիրուն դուակներն իրենց չընկալաւոր շարուն, ընդհանրական դատարակութեան սիրուն աշակերտներ ունենան, և հուկութեան այն ընդհանուր դատարակութեան նպատակին ու նշանաբանին իրենք և իրենց սերունդն ժառանգընան:

Տնտեսական դատարակութեան դատը երեւակայական չէ ու տեսական երեւոյթ չունի, այլ թանձր է, զգալի և աչքի տակ, ուստի կանայք երեւք իրաւունք չունին խոյս տալու, և ես չուտով խմնուիրական պարտականութեան չեմ ետ կենար, մինակ իրենց հագածը ու իրենց տուն քանդող մտային վրայ չի վերջանար խօսքս: Ես իմ գրիչը անոնց անական չափազանց, ընկերական չույլ, ու ընդհանրական նին հակառակ ուտելու խմելու, եւ տան շարժական զարգուց վրայ պիտի

շարժեմ, իրենց ուշք հրաւիրելով: Տուն ունին, շատերն, ցաւալի՜ ան ալ չունին, այն որ հանգստարան մը և իրեն բաւական գետին չունի, կուգէ թող միլիսն ունենայ, ոչ ինչ չունի, իսկ այն որ փոքրիկ տուն մը իրեն բաւական գետին ունի և սիրտ մը որ կը սիրէ զայն և կը սիրուի անկէ անկեղծ սիրով, բսել է աշխարհիս տիեզերական թագաւորութիւնն ունի: Տուն չափաւոր, կրտեմ, այս խիստ չափաւոր, զի աւելորդն խելքէն ՚ի գաւ, միշտ մարդկանց դժուարակիր բեռներն, եւ ընտանեաց ու գերդաստանի անհանգստութիւն կը սրտածաւէն միշտ:

Ճոխ ընչառեւերուն չէ խօսքս եւ ոչ միջակ մարդկանց, հասարակ և օրական պարէն հայթայթող անձանց կրտեմ, իսկ ճոխ գերդաստանք, պէտք է որ ճարտարագործութիւնն քաջութեւն համար մեծ շինուածներ ունենան, քանդակագործը խրախուսելու համար արձաններ քերութներ ունենան, արուեստ և հանձար մեծարելու համար անոնց ունեցածներն առնեն, հնութիւն, բանաստեղծութիւն, և ուրիշ որ և է ուսումը սիրելի ընելու համար հարկ է որ հետեւին եւ թանգարաններ ունենան, ոչ իրենց համար, այլ կարօտ եղողին համար, հասարակաց շինուածով իրենց անունը մեծագործաց և վեհասիրաց ցանկին մէջ գնեն, այն է, որբանոցներ, հիւանդանոցներ, գործարաններ, դպրոցները, աղօթատեղիներ, բնութեցարաններ, զբօսանոց պարտէզներ շինելու են, իրենք և ժողովուրդն մէկ տեղ վայելեն, օրհնեն, Աստուած գովեն: Երկրի կղկզանք որ և իցէ կերպով որքան ալ գիղղի, որքան ալ ունայն բաներու երթայ կամ մնայ, օր մը ՚ի հարկ է ուրիշ տեղ կը ցրուի, աղէկ է բարի նպատակաւ ջրուի: Միջակ մարդ

կանց տնտեսական դաստիարակութեան
դասը պէտք է մերժէ այսպէս անհա-
տական տիկնոջ մը, բանբիշի մը յղա-
ցած մեծագործութիւն, թէ որ բաղ-
ձանքը և կամքը կը յօժարի անմահ ա-
նուն ունենալ. իւր վիճակը կը ներէ
իրէն, ուրիշ իրէն պէս տիկնոջները
գտնել, բանի որ մէկ մեծ գործ մէկ
ու ճոխ տիկին մը բամբիշ մը կրնէ,
թող իրենք տառնէն եւս աւելի քան
մէկ լրջան ընեն, ի հարկ է երկնքի մեր
բարի եւ բարութեան վարձատրող
Հայրը իւրաքանչիւրին ըտիւր ըղձին
կուտայ և կը պատկէ. իմ սիրելի մայ-
րեր ու պատուական քոյրեր, թէ որ
գուք տնտեսագիտութեան լէք, ու
ընդհանրական դաստիարակութե հար-
կադրութիւնն չը մերժէք, աւելորդն
ատէք չափաւորն սիրէք, տէրոջ և հա-
սարակաց բաժին սիրով տաք, հաւա-
տացէք, երբէք աչք չի մնար, որ աւ-
տասուք քամէ, սիրտ չի մնար, որ հա-
ռաչէ. այլ ամեն դէմք զուարթ, ա-
մեն սիրտ ուրախ երկնքի Հայրը մեր
բարի Արարիչը կօրհնեն ու իրենց բա-
րերարներու համար աղօթք կրնեն.
որով ձեր պատուական օրերը և ան-
գին ժամերը ի զուր չեն սահեր. դուք
անով ժամանակի թերթերու վրան կը
գրէք ձեր շնաշխարհիկ 'գործը', ու
մեր սիրելի Փրկիչն Յիսուս ժամանակի
թեւերէն մեծ տոմարի մէջ կը գրէ հա-
չիւր, երբ աւարտի "Եկայք իմ Հօր
օրհնածներ, երկնից թագաւորութեան
մէջ, որ պատրաստուած է բարեգոր-
ծաց համար": Տիկնայք, սիրտերնիդ
խիղճերնիդ արդեօք չի վիայեր թէ եր-
կու մասնի ունենալով աւելի զուար-
ճութիւն մի չի տար ձեզ՝ մէկ ունե-
նաք, տաան ալ հինգ ընկեր որբ աղջ-
կան և տղայի հանգերձ, հանգիստ և
բարոյական կերակուր կուսենաք, ան-
շուշտ կ'ունենաք թէ որ խղձի ձայնին

լսելու ականջ ունենաք: Տիկնայք, պա-
տուական տիկնայք մտաւ զմեզ սորը
կութեան կապկութեան, հուսկ ապա
և ամօթապարտ աղքատութեան կը
մատնէ, մեր մէջի անհաշտ թշնամին
զմեզ կործանող բաղձանքն և նորաօր-
բութիւնն մերժենք ի բաց. ապրինք
իրեւ մարդ, ապրինք բնութեան պա-
հանջքով, ապրինք Աւետարանի լու-
սաւոր շաւղով: Ի՞նչ է, բնութեան
պահանջն, եթէ ոչ ընկերին կամենալ,
ինչ որ մեզի կուզենք, չը կամենալ ա-
նոր, ինչ որ մեզի չենք ուզեր: Ի հարկ
է ուշ ի կուրծ կը խորհէք տիկնայք,
թէ որ կարօտ ըլլալդ կուզես յօժար ա-
ջօք կարօտելոյն վրայ անկարեկից սրբ-
տիւ նայէ, Աւետարան և Աւետարա-
նի կենաց բանն զմեզ աղնուսուցեր
է, իմ պատուական քոյրեր, իմ սիրե-
լի մայրեր, նորաօրթիթ կուսանք, մեր
Եւա մօր անմեղ վիճակը մեր արդի
վիճակէն լաւ չէք, թէ որ սուր տես-
նելու երեք: Ուրեմն ձեռք ձեռքի
տուէք սիրտ սրտի կապեցէք ձեր ան-
դաստիարակութեան բիծերն ու ա-
րատ, որն յառաջագիմութեան ար-
գելք, մարութեան առաջնորդ, սիրց
խոչընդակ, ատելութեան գրգռիչ,
աղքատութեան սուրհանդակ եղած
է, սրբեցէք հալածեցէք, տնտեսական
դաստիարակութեամբ, որն կուսու-
ցանէ խնայել, չափաւոր ապրիլ միշտ
երիտասարդաց անզուսպ բաղձանաց
դէմ թումը դնել, վայելուչ և պիտա-
նին յարգել տալով.

Տիկնայք, ձեր ջրթանց համոզու-
մը թէ սուրբ լինի թէ առ ի վատու-
թիւն այնքան ճարտար է և դիւրա-
լուր, որ Կիկերոն իւր տաղանդով և
ոչ իսկ կրնայ ձեր ընկերքը ընել, այն
է, ի լաւն կամ ի վատթարն կանչել.
Դուք տնտեսական կենաց մէջ կ'ապրէք,
բայց բովանդակ աշխարհի կ'իշխէք,

ուրեմն ձեր ծանր և աղբու իշխանութիւնն 'ի բարին 'ի գործ դրէք : Յսնուն Աստուծոյ, Հայրենեաց և ձեր սեռին կ'երդում, թէ որ դուք ձեր այս նորասիրութեան մրուրէն չըմբռնիք, մէկ կին եօթն էրկան օձիք պիտի բռնէ, ու կարօտ բոլորովն մեր նախնեաց անունը, աւանդը եւ յիշատակը մեր գերեզմանաց մէջ մեր հետ պիտի թաղենք, չափազանցութիւն չէ խօսքերս, այլ վատ գուշակութիւն, գուցէ հեգնէք, բայց և կը տեսնէք :

Եւրոպան մեր նորասիրութեան մերժումէն ոչ ինչ չըլլար, իսկ մենք շատ օգուտ կը բաղեմք, մեր մոլութենէն նա հաց չի շահիր, այլ թէ հացին վրայ կոպի կը բսէ, իսկ մենք զայն մերժելով ուտելու հաց կունենամք, ապագայն կը շահինք, ու մեր անմեղ զաւակաց երջանկութեան դուռը կը բանանք, մեր հայրենեաց Տաճկաստանի գործաւորներն, արհեստաւորներն գործ կ'ունենան, կը խորախուսին լաւն կը շինեն, արհեստն կը ծաղկի, մարդիկ առաջ կ'երթան, մենք ալ այն աւան լաւն, բնտիրն և ճաշակաւորն կ'ունեննք, կը հագնենք ու կը վայելենք :

Տնտեսական դաստիարակութիւնը, որքան պէտք ունէր և որքան մեր կարող կը տանէր կամ դաղափար ունէինք վրան, ըսինք, արդ կ'անցնինք ընկերական դաստիարակութեան : Այս դաստիարակութիւնն խիտ անձուկ սահման մի ունի, բայց և կարի փափուկ, պէտք է մայրեր, սիրտեր ու կամք կը թել ընկերական աշխարհի մէջ ալեկոծեալ կենցաղոյս մէջ զգուշ և ապահով բալել, սիրտեր կը թել սիրելու ու սիրուելու համար, սիրտեր կը թել ապրիլ և ապրեցնելու համար, սիրտեր կը թել վիշտեր բառնալու և բերի-

րութիւն պատճառելու համար :

Անհնար է որ մայր մը իւր թէ աբու զաւակին և թէ աղջկի զաւակի բնաւորութեան տեղեակ չըլլայ, նա իւր որտի պէս անոնց սիրտը կրնայ չափել կշռել եւ կարգալ. թէ որ նոր բուսած ակոտ մի կայ, նա շօշափելով կրնայ խել. թէ որ առաքինական բողբոջ մի կայ, նա դարմանելով կրնայ անոր աճման պատճառ ըլլալ, թէ որ սիրել ու սիրուիլ կը մերժէ, նա լաւ ճամբով կրնայ սիրելի ընել. թէ որ սիրտը ընկերական ազնիւ կապը կը խտտէ ու լպիրշ հրապարակին կը նուիրէ իւր բաղձանքն, նա իւր սիրուն խրատներով կրնայ զնա խելամոցնել ու գոռող ինքնասիրութիւնն չափաւորել : Նորասիրութիւնն, որ դարուս վնասակար ցեղն է, ու ծերոց երիտասարդաց, մանկանց, տղայոց սիրելի, մայրն օրինակներով աղբի աղբի ապաւցոյցներով կրնայ իւր սիրելի զաւակները անոր ծախիչ ճիրաններէն կորզել, նամանաւանդ իւր հնասէր յամառ ըսկըգամբ : Այս դաստիարակութիւն մօրմէն կըսկսի, մօր մը պարտք կը սահմանուի. զի զաւակ մը որքան ալ բռնածիր լինի, վերջապէս միշտ ենթա կայ է փորձի. փորձով կարելի է բարի լինիլ կամ չար, բայց երբ մայր մը իւր ծանր տաղանդով իւր զաւակի ապաւցայ կենաց երջանիկ կամ թշուառ օրերը կանխատեսէ ու իւր զաւակին իբրեւ 'ի հայելոյ ցոլցանէ, այն է որ իւր զաւակի ֆիզիքական կենաց հետ բարոյական կեանքն եւս կ'աւելցնէ :

Այս դաստիարակութիւնն թէ որ անթերի կատարուի, ես կ'ապահով ջրնեմ մեր Հայ աղբը, թէ իրէն մէջ երբէք նախանձ, ատելութիւն, կոխ և բաժանում չի մնար, այլ իբրեւ եւ դեմ կը դառնայ Հայոց տունները, ու անոնց մէջ բնակողներն հրեշտակներ

քան թէ մարդիկ կը լինին : Անշուշտ գիտեն մայրերն թէ՛ կուռի մը առաջին առիթը ուրկէ կը ծագի : Երբ մայր մը իւր զաւկի ետակամութիւնն ինքնասիրութեանն արմատէն խրած չէ, այլ անոր փախուկ և զգայուն սրտի մէջ թողած է, ՚ի հարկ է կուռը ինքնիկէն կը վազէ, բայց երբ հեղ, խռնարհ, անյիշատակ կը թափէ, ուրկէ սիրտի կուռը տեղի ունենայ :

Երբ մայր մը իւր զաւակաց սրտէն բոլոր չար ցանկութեան արմատն հանած է այն է ընկերի գեղոյն, ընկերի շարժական և անշարժ ընկից ցանկութեան կամ անոր բարի անուան նախանձն, ըսել է՝ իւր զաւակները ատելու բան մի չեն ունենար, զի մարդ երբ իւր ձգտման չի հասնի կատէ եւ ոչ թէ ուրիշ ատեն, նախանձ ու բաժանումն մի և նոյն քայլով կը ձեմեն այն տեղ ուր սիրոյ սուրբ սխալ խիստ պակաս է : Այս թող չի գանգատեն երբէք մայրերն և իրենց զաւակներն ապերձանիկ կարծեն, անոնց յանցանքն անոնց թշուառութեան պատասխանատուութիւնը իրենցն է քան թէ անոնց, զի ժամանակին չը սերմանեցին անոնց փախուկ սրտի մէջ առաքինութիւն, չը խնային անոնց սրտէն մոլութեանց արմատները : Երբ կը լինի որ անոնք սուրբ սիրոյ արժէքը ճանչնան, իրենց սուրբ գրկափարուով մինչեւ գերեզմանի բաժանումը տանեն, այս սիրոյ հիմը թէ որ հաստատի և գերդաստան կազմէ, գերդաստանը նահապետական տուն կը լինի, նահապետական տուն միաձոյլ քաղաք և այն քաղաքն՝ երկինք է և ոչ թէ երկիր, որուն թագաւոր և օրէնք տուող Աստուած է և ոչ մահկանացու : Այս բանները վիճակն քրիստոնէութեան առաջին դարն յայտնեց և արդ ՚ի Հայաստան շատ տեղ կայ : Ի՞նչ սիրուն եւ

լինչ աղիւ է, երբ մէկ տան մը մէջ տարին հինգ վեց երախոյ կը ծնի երեսուն հինգ օրորոյ կը շարժի, ըսել է երեսուն հինգ հարս քանի մը տան ախկին, կեսուր իրրեւ թագաւոր տան մէջ կը ձեմեն կը գործեն, ու միշտ ուրախ են : այն զի նախանձ և ատելութիւն չունին, երախոյի ճիշտ արտասուք չի կայ զի որն մնէ և որ հարսն մօտ լինի, նա իւր իւր հարազատ իւր կենաց վտակը անոր կուտայ : Ո՛հ նախանձելի կեանք և սուրբ ընկերութիւն, ասոնք անուրանալի է որ ընկերական դաստիարակութիւն լսած չեն և չեն գիտեր, բայց իրենց բնական խմորը ընտիր ըլլալով այս սուրբ ժեթախներն կը կազմեն, ու երջանիկ կենօք կ'ապրին զուարթ կենօք : Ինչու պիտի ծածկեմ, անոնց ծերունիք կորստամակ չեն ըլլար, անոնց սրտաւանդներն գէմբերնուն վրայ խորշով ու ծալք չեն ունենար, մինչ մենք, ցաւօք կըսեմ, ախկնայք մայրերս և քոյրերս, ոչ ծեր կուենանալի ոչ սրտաւ, թէ որ հաղարէն մէկը իւրեւ հաղաւադիւս մնայ, տեսնես թէ ի՞նչ ձեւերու կ'ենթարկուի :

Ամուսնական սուրբ սէրը տնտեսական դաստիարակութեան սովէն կը սոսկայ, ոչ մի երիտասարդ կը յօժարի ամուսնանալու զի կենդանւոյն արդարեւ ՚ի դժոխս պիտի մատնուի կեանք ունենամ ըսելու տեղ՝ թշուառութիւն պիտի գտնէ, ու օր քան զօր մաշելու պիտի ենթարկուի, զի ո՞ր կին է այս դարու մէջ, երբ որ ամուսնանայ, իւր ամուսնոյն ժիր պսակ տնարար և բերկրութեմ առիթ լինի, ոչ մի աղքատիւ ընդհակառակ իւր բանտարկած բաղձանքը իւր համբերութեմ կնիքը կը լուծէ, աչի տեսածն տեսնել կ'ուզէ, չի կերածն ուտել կ'ուզէ, չի հագածն հագնել կ'ուզէ, վերջապէս կ'սպառնայ առանց չիմնելու անպատուութեան մէջ մնալ :

նելս խօսքը մէջ կը բերէ , կ'ըստառնայ իրաւունք ունի , քանզի էրիկն թէ որ երկչոտ ու կնամարդի է կը վախնայ մինչ չեւ յետին շունչ տօկալով : Թէ որ խաւ բերայ մին է , խկոյն ուրախ կ'ըլլայ իբրեւ ժամանակաւոր ամուսին , առանց վշտի կը ձգէ , ուրիշի մը կը յարի , թէ որ արբեցող ու խաղամու է արդէն իւր ուշք ուրիշ տեղ է , կնոջ այն սոսկալի խօսքերը իրեն համար չէ , վերջապէս ըսենք իրաւունք ունի , զի նա զանի սիրելու անոր հետ ապրելու համար անոր հետ կապուած չէր , այլ առերես (բէսմէն) զի գիրն լոյսի , այլ ճամբայ մը գտնել իւր դարանած ագգի աղբի խորհուրդն գործադրելու : Այս կանանց անգաստիարակութեան կողմն է : Իսկ մարդկանցն շատ է եւ անթիւ , ուստի գրել չեմ ուզեր , կան կանայք որ արդարեւ դիպուհներ են ու բոլորովին սքանչելիք , որոնց առաքինութեան և ընկերական դաստիարակութեան հզօր արդիւնքն է որ զիրենք իրենց արկածից մէջ կը պահէ անդդուելի : Խեղճ ու պատուական քոյրերս , ես գիտեմ և շօշափած եմ ձեր խեղճ և անտանելի վիճակն , երեք գաստիարգ կանանց մէջն անգամ ճոխ թշուառ տիկնայք արդարեւ խիստ ծանր հարուած կը կրեն երբ իրենց ամբարիշտ մարդիկն անհաւատարիմ իրենց պայմանին , գերի իրենց մոլութեան իրենց սուրբ հայր իրենց վճիռ ջուրը կը ձգեն սիրտ ՚ի խոց և ՚ի մահ ուրիշ վատ և հրէշ արարածոց հետ երջանկութիւն կը խնդրեն , մահու և անոր դառն հարուածին կ'ըստասեն քան թէ ուրիշ բան մը կ'ընեն , և իրենց կեանքն երազի մէջ կը հինցնեն : Միջակ տիկնայք որքան որ այս կերպ տրեւած չունին , այլ ատելութիւն եւ վիճի կռիւր իրենց տունէն չի պակսիր , այլ օրական պարէն ունեցողներէն ա-

ւելի վատ է , զի մինչ ՚ի մթան չարաչար կ'աշխատին աչքներնին ճամբան կը մնայ թէ սրտին կէսն ահա պիտի գայ : Ո՛հ , ինչ կը տեսնէ , ամենէն հաւանական ատեն , ժամ հնգին խեղքը կորած , քսակն սարպած տուն կը մըտնէ , երանի՜ թէ լուր , ի՛նչ կ'ընէ , կը պօռայ , կը կանչէ , կը հայհոյէ , խեղճ կինը կառքի անիւէն աւելի արագ կը դառնայ ամեն կերպ փաղաքշանք կ'ընէ կը շօյէ , իբրեւ գազան վայրենի , հնար չի գտներ սիրտն յարեան ծով , մըրտալին աչերն կ'առնէ , առաւօտն նորէն ակնկառած իրիկուան հանդեսին կը գործէ : Այս խեղք աղբարներ ի՛նչ կ'ընեն , թէ որ խեղճ կնոջ մէկ գին ընելիք բան մը դարդ մը ունի , անոր համար զանի կորզելու չափ սէր ու զմայլում կը դառնան մինչեւ որ զանազան պատճառով յափշտակեն , այլ իրեն համար կին է , թէ իբր կին է , հոգ չէ , իւր նպատակին հասաւ , մինչեւ զայն վատնէ , կինը կ'ըստիպուի զինք ձգել ու ինքն ալ կերպն գիտէ :

Թէ մանչու և թէ աղջկան այս ցաւալի արկածները ընկերական դաստիարակութեան պակասութենէն կը ժայթքի , ու մարց հոռի լինելէն , խիստ ցաւալի և ծանր դէպք մի կամ տարրաջեալ գէշութիւն մի եւս յառաջ պիտի բերեմ ակամայ , գիտեմ , սիրելի մայրերս պիտի զայրանան , բայց և պատուական քոյրերս ու ազնիւ արջիկներս պիտի ուրախ ըլլան յայտնած ճշմարտութեանս վրայ , որն նոյն իրենց իրաւացի բողոքն է : Արդեօք յօժարութեամբ կը գրեմ այս իրողութիւնք , քաւ լիցի , այլ արտասուօք , ուրեմն թող չի մեղագրեն զիս ընթերցողք թէ ինչու չաա առաջ երթալ կ'ուզեմ , և իրենց գաղտնեաց վարագուրին կը դպչիմ , հարկն կը պահանջէ , իրենց անմեղ զաւակաց իրաւացի արտունջը կ'ըստիպէ :

դիս խօսելու, ուրեմն թող ներող ըլլան
ու խրատուին արդարացի յանդիմա-
նութենէն:

Անշուշտ կրգգան թէ իրենց օգուտ
է ըսածս ու իրենց զաւակաց ապագա-
յին մեծ շահ:

Կը հարցնեմ այն հասակաւոր
աիկնանց, թէ ինչո՞ւ ժամերով հա-
յերիին առաջ կը կայնեն, կը շար-
ուին, բոլորովին իբր աւանդահինգ տա-
րու աղջիկ ըլլալու կեղծ դէմք մը կ'ու-
նենան, ազգի տղգի սեղմող ձեւաւո-
րող հագուստներու մէջ կը մոնեն,
ոտից մինչև ցգլուխ դիւթիջ զգեստով
կը պճնին, արգետք նայատակ մի ունին
թէ ո՞չ, այո՞ ունենալու են, եւ շատ
հաւանական է որ հետեւացուցածս
ըլլայ: ձիշտ կ'ըսեմ, շատ կ'աղաչեմ
դԱստուած, որ հանած հետեւութիւ-
նըս հակառակ ելնէ, այն է, իրենց
գողորիկ ճաշակի անհունութիւնը ըլլայ
և ոչ թէ իմ ըսածս, այն է իրենց մա-
տաղ օրիորդաց հայն կտրելու ջանքն.
բացատրեմ խօսքս, ինչո՞ւ կնիկներն կը
գանգատեն թէ աղիկնիս տուն մնաց,
քանի որ իրենք են ընող. իրենք ի՞նչ
կ'ընեն, կը շարուին ու իրենց հետ
յարաբերութիւն ընելն խիստ դիւրին
է, ալ պատուական աղիկան դժուարին
լուծի տակ ինչո՞ւ մոնէ այն ճարպիկ
դող երիտասարդն, մայրն արդէն իւր
աղիկան թշնամին է. ս՛հ, թէ որ այն
անհաւատարիմ կինը քիչ մը յիմար
ըլլայ, ու այն ճարպիկ դող երիտասար-
դոն աւելի մոլութեանց ագահ, այն
հնոտիին հետ անմաշն ալ կը տանէ,
'ի վերջոյ անէրիկ տան մէջ, քանի մը
չամուսնացած պրիներ կ'ունենայ, ճար-
պիկը խոյս կուտայ տարիք առածը կա-
պաշաւէ, բայց առանց ամուսնութեան
կին եղած աղիկներն ի՞նչ ընեն: Ասոնք
բոլոր մէկ կնոջ շարքէն մօտայէն եւ
անհաւատոր կիրքէն կը ծնին. կան

նայք ալ որ զիրենք և իրենց սիրալիւ-
թիթ օրիորդները կը հղանեն, փողոց-
ներ կը հանեն, մօտիսաներու կրպակ-
ներն տանելու կ'առաջնորդեն, որմէ
կը ծագի լոյս, լոյս որ ամեն գոյն, ամեն
ձեւ յայտնի կ'ընէ. աղջիկը իւր ուզածն
կը գտնէ, տղան իւր փնտռածն իրեն քով
կը տեսնէ, անհաստատ պայծանտի, սոսկ
կրից թելադրանք, եւ վատ առաջ-
նորդի ձեռքով: Ընկերական սիրոյ
կապը այն օր լուծաւ, երբ մայրն
մը իբրեւ հետեւորդ քալեց իւր աղջ-
կան ձայնին, այն ինչ բաւ, լսեց, ա-
նոր կամաց երբէք չը հակառակեցաւ
նախկէ պէտք է, նախկէ է թող ընէ-
էն զատ բան մը չորաւ, այն օրէն կը
սեմ ընկերական սիրոյ կապը խղեցաւ
երբ մայր մը իւր զաւկին սկսաւ չը
հարցնել թէ՞ ո՞ւր էիր. ո՞ւրկէ կ'ուգաս.
կամ թէ հարցուց և խմցաւ դար-
ձեալ ականջի ետեւ ձգեց, անհոգ
կեցաւ, գիտցաւ որ անոր ընթացքը
վտանգաւոր է, բայց չըգգուշացուց,
եթէ զգուշացուց ալ ետեւէ չեղաւ
խապառ անոր դարմանին. սէրը երբ
սուրբ չէ և ճշմարիտ, անտեւական է,
յագում մը ունի, նոյնպէս եւ սիրա-
հարկն, երբ սիրտ սրտի չէ, մինակ
բաղձանք մի է, օր մը կը յագենայ.
մագնիսն ալ ասեղը իրեն կը ձգէ ըզ-
ձիւ. բայց երբ կը կշտանայ թող կու-
տայ:

Ասկէ պարզ ինձ համար ներելի չէ
խօսիլ նամանաւանդ թէ խօսիլ չեմ ու
զեր քիչ անգաստիարակեալներու հա-
մար՝ շատ մի անմեղաց առջեւ:

(Շարունակութիւն)

Ա. Բ. Պ. Վ.

դիւ խօսելու, ուրեմն թող ներող ըլլան
ու խրատուն արդարացի յանդիմա-
նութենէն:

Անշուշտ կրգգան թէ իրենց օգուտ
է ըսածս ու իրենց զաւակաց ապագա-
յին մեծ շահ:

Կը հարցնեմ այն հասակաւոր
տիկնանց, թէ ինչո՞ւ ժամերով հա-
յելիին առաջ կը կայնեն, կը շարա-
ուին, բոլորովին իբր առանձինգ տու-
րու աղջիկ ըլլալու կեղծ դէմք մը կ'ու-
նենան, ազգի տղգի սեղմող ձեւաւո-
րող հագուստներու մէջ կը մօնեն,
ոտից մինչև ցգլուխ դիւթիչ գգեստով
կը պճնին, արդեօք նպատակ մի ունին
թէ ոչ, այո՞ ունենալու են, եւ շատ
հաւանական է որ հետեւացուցածս
ըլլայ: ձիշտ կ'ըսեմ, շատ կ'ազաչեմ
ՂԱստուած, որ հանած հետեւութիւ-
նքս հակառակ ելնէ, այն է, իրենց
գողտրիկ ճաշակի անհունութիւնը ըլլայ
և ոչ թէ իմ ըսածս, այն է իրենց մա-
տաղ օրիորդաց հացն կտրելու քանքն.
բայտարեմ խօսքս, ինչո՞ւ կնիկներն կը
գանգատեն թէ աղջիկնիս տուն մնաց,
քանի որ իրենք են ընող. իրենք ի՞նչ
կ'ընեն, կը շարաւին ու իրենց հետ
յարաբերութիւն ընելն խիստ դիւրին
է, ալ պատուական աղջկան դժուարին
լուծի տակ ինչո՞ւ մօնէ այն ճարպիկ
գող երիտասարդն, մայրն արդէն իւր
աղջկան թշնամին է. ո՞հ, թէ որ այն
անհաւատարիմ կնիք քիչ մը յիմար
ըլլայ, ու այն ճարպիկ գող երիտասար-
դըն աւելի մոլութեանց ագահ, այն
հնոտիին հետ անմաշն ալ կը տանէ,
ի վերջոյ անէրիկ տան մէջ, քանի մը
չամուսնացած այրիներ կ'ունենայ, ճար-
պիկը խոյս կուտայ տարիք առածը կա-
պաշաւէ, բայց առանց ամուսնութեան
կին եղած աղջիկներն ի՞նչ ընեն: Ասոնք
բոլոր մէկ կնոջ շարքէն մօտայէն եւ
անչտիւտոր կիրքէն կը ծնին. կան

նայք ալ որ զիրենք և իրենց սիրավոր-
թիթ օրիորդները կը հղանեն, փողոց-
ներ կը հանեն, մօտիսաներու կրպակ-
ներն տանելու կ'առաջնորդեն, որմէ
կը ծագի լոյս, լոյս որ ամեն գոյն, ամեն
ձեւ յայտնի կ'ընէ. աղջիկը իւր ուզածն
կը գտնէ, տղան իւր փնտռածն իրենքով
կը տեսնէ, անհաստատ պայմանով սոսկ
կրից թելադրանք, եւ վատ առաջ-
նորդի ձեռքով: Ընկերական սիրոյ
կապը այն օր լուծաւ, երբ մայրն
մը իբրեւ հետեւորդ քալեց իւր աղջ-
կան ձայնին, այն ինչ բսաւ, լսեց, ա-
նոր կամաց երբէք չը հակառակեցաւ
ճանիչ է պէտք է, ճանիչ է թող ընէ-
էն զատ բան մը չորաւ, այն օրէն կը
սեմ ընկերական սիրոյ կապը խղեցաւ
երբ մայր մը իւր զաւակին սկսաւ չը
հարցնել թէ՞ ո՞ւր էիր. ո՞ւրկէ կ'ուզաս.
կամ թէ հարցուց և իմացաւ դար-
ձեալ ականջի ետեւ ձգեց, անհոգ
կեցաւ, գիտցաւ որ անոր ընթացքը
փոանգաւոր է, բայց չըգգուշացուց,
եթէ գգուշացուց ալ ետեւէ չեղաւ
խաղառ անոր դարմանին. սէրը երբ
սուրբ չէ և ճշմարիտ, անտեւական է,
յագում մը ունի, նոյնպէս եւ սիրա-
հարիւն, երբ սիրտ սրտի չէ, միևնա-
բաղձանք մի է, օր մը կը յագենայ.
մադնիսն ալ ասեղը իրեն կը ձգէ ըզ-
ձիւ. բայց երբ կը կշտանայ թող կու-
տայ:

Ասկէ պարզ ինձ համար ներելի չէ
խօսիլ նամանաւանդ թէ խօսիլ չեմ ու-
ղեր քիչ անդաստիարակեալներու հա-
մար՝ շատ մի անմեղաց առջեւ:

(Շարունակում է)

Ա. Բ. Պ. Վ.

ՕՐԱԳԻՐ

Ե Ի

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ամուսնական խնդրոյ նկատմամբ մերթ ընդ մերթ մանրիկ յօդուածներ կը հրատարակուին Օրագրի մէջ։ Սոյն յօդուածներն, եթէ հիմնաւոր և ուղղախոհ խորհրդածութիւններ լինէին ամուսնութեան վերայ, խիստ օգտաւէտ կարող էին լինիլ հասարակութեան, վասն զի ամուսնական խնդիրն այնպիսի մեծ խնդիր է, որ իւր մէջ կը պարունակէ ընկերական կենաց շատ մեծամեծ խնդիրներ, կամ, աւելի սրազատեալ, ընկերականութեան երջանկութիւնն կամ ապերջանկութիւնն։ Բայց դժբաղդաբար, Օրագրի հրատարակած յօդուածներն, ոչ միայն նը պատառոր չեն ամուսնական խնդրոյ աղնուազարծութեանն, այլ ընդհակառակն՝ բոլորովին ընդդէմ են ամուսնութեան բուն ոգւոյն։ Մէք չեմք ուղիւ մեր խօսքն ապացուցանելու համար մի առ մի յառաջ բերել այս տեղ Օրագրի իւրաքանչիւր թիւերն, որոց մէջ ամուսնութեան վերայ կը խօսուի, և հարկ եւս չեմք տեսներ յառաջ բերելու, վասն զի գրեթէ յիշեալ թիւերու պարունակութեան գլխաւոր տարրն նոյն է, այսինքն՝ Օրագիր բաւական չը համարէր Հայաստանեաց Եկեղեցւոյ սկզբունքն ամուսնութեան նկատմամբ, այլ կ'առաջարկէ, որ ամուսնական նոր օրէնքներ խմբագրուին, որպէս զի ամուսնութեան խրնդիրներն նոյն օրինաց տրամադրութիւններն են։ Օրագիր սոյն համոզման կը ծառայէ, ինչպէս, ՚ի միջի այլոց, ապացոյց է այս բանիս վերջին ժամանակներս հրատարակած իւր 921 թիւին, յորում կը վճռէ թէ Եկեղեցւոյ

ոչ կարեւորի ժամանակն անցած է, կըր Եկեղեցի մը ժողովրդեան ընկերական կեանքին դէմ կ'ելլէ՝ ժողովուրդը անկէ կը վախճի։

Օրագիր ագիտութեան, չասեմք գայթակղութեան, խիստ ցաւալի օրինակ կ'ընծայէ գրական աշխարհին, երբ ամուսնական կենաց ջրջանին մէջ պատահած զեղծումներն Եկեղեցւոյն կը վերադրէ և կը կարծէ թէ՝ սոյն զեղծումներն խպտու կ'անհետին, երբ ամուսնական օրէնքներ խմբագրուին և Ազգային Ժողովոյ վիճարանութեան բովն և Եկեղեցական Համագումար Ժողովոյ ատեանն անցնելուն վերջը՝ վ. ի. Կաթողիկոսի որոշմամբն վարեալման։ Օրէնքներ խմբագրելն և մանաւանդ վաւերացնելն խիստ դիւրին գործ է. բայց օրինաց խմբագրութիւնն ամենեւին ապահով երաշխաւորութիւն չէ ամուսնական կենաց բարեօրման։ Ուրեմն ամուսնական կենաց ճշմարիտ բարեօրման արմատն ոչ թէ օրինաց խմբագրութեան, այլ դատարարականութեան եւ կրթութեան մէջ որոնելու է, և այն Աւետարանի դատարարականութեան, և Եկեղեցւոյ քրիստոնէական կենարար բուրգընաց կրթութեան, և ոչ թէ այժմեան դպրոցաց մէջ աւանդուած երեւութական և աչքակապ կրթութեան մէջ, որ քրիստոնէական դատարարական հակապատկերն է աւանդայն մատմբ և հետեւապէս անկրթութիւն՝ քան թէ կրթութիւն։

Ինչպէս կ'երեւի, Օրագիր այն պարբերականներէն է, որք ոչ միայն ամուսնական, այլ գրեթէ ամեն ընկերական խնդրոց նկատմամբ, տակաւին խիստ յետադէմ ժամանակներու մէջ կ'ապրին, և փոխանակ յառաջագէմ աշխարհի պարզած գաղափարներն հաղորդէ։

լու մեր Ազգին, կը հաղորդեն ինչ որ հնացած եւ խոտան համարուած է: Արդարեւ՝ կար ժամանակ որ նոյն իսկ Օրադիրի ակնարկած Եւրոպան իւր օրինաց կոճղերն կրսուուարայնէր և ամուսնութեան նկատմամբ եւս օրէնքներ կը խմբագրէր, բայց ներկայ ժամանակիս մէջ յառաջագէժ ազգերն, տեսնելով որ օրէնքներն ու կանոններն անբաւական են ընկերական կեանքն կանոնաւորելու՝ սկսած են մարդկային սեռի արհուարածութեան և բարոյական երջանկութեան միակ, վսեմ եւ գլխաւոր օրէնքն քարոզել, այն է՝ ԴԱՍՏԱՐԱԿԵՒ, և ԿԻԹԵՒ, յորում կ'ամփոփին ամենայն օրէնք և ճշմարտութիւնք:

Օրագիր, եթէ ժամոնակի յառաջագիմութեան հետ ընթացած լինէր և իմանար, որ ամուսնական նոր օրէնքներ հաստատող ազգերն իսկ, իրենց օրէնքներէն յուսահատելով՝ սկսած են ընտանեկան և ընկերական կենաց բարւոյման համար բազմահատոր հրահանգիչ մատեաններ հրատարակել և ամենեղժմանց, ամեն հիւանդութեանց միակ դարմանն ճշմարիտ դաստիարակութիւնն հռչակել, Օրագիր անշուշտ լուսաւոր աշխարհի ընտիր խորհրդածութիւններն կը ջանար քաղուածել և իւր Ազգին հաղորդել, քան թէ Եկեղեցւոյ դէմ զինիլ ու ամուսնական նոր օրէնսգրութեան խնդիր յարուցանել, և անհմուտ բժշկի նման այնպիսի դեղ առաջարկել, որ աւելի մահացուցիչ է քան թէ կենդանացուցիչ:

Առաջին ժամանակներու մէջ մեր Ազգային ամուսնական խնդիրներն մեծ մասամբ ընտանեկան յարկի տակ կը տնօրինուէին ընտիր քահանայից եւ ազնուատիրոտ դրացեաց միջամտութեամբ. շատ ժամանակ չէ որ Ազգալին ժողովոց ատենին կը ներկայանան

և արդէն յայտնապէս կը նշմարուի որ սոյն ներկայացումն իսկ առաւել վատ թար քան թէ շահաւոր արդիւնքներ կ'արտադրէ: Հապա եթէ այնպիսի մի տխուր ժամանակի հասնինք որ, Օրագրի առաջարկած նոր օրինաց շնորհիւ, մեր Ազգային ժողովական ատեններն առն և կնոջ անձամբ դատախազութեան և կամ երկոյունց կողմանէ վարձեալ փաստաբանութեան դատարաններու փոխարկին, ինչ աղէտալի տեսարաններ պիտի ներկայացնեն մեր ազգային նահապետական կենաց՝ ընտանեկան յարկերն: Ի՞նչպէս պիտի իրենց տունն և իրենց զաւակներու մօտ վերադառնան երկու իրարու դէմ փառաբանող ամուսիններն, և եթէ իրենց դատն երկարի ամիսներ և տարիներ, ինչպէս պիտի բնակցին, ո՞վ պիտի հագայ իրենց զաւակներն և ինչ գթութեան կիրքեր ատես որ պիտի չը յուզուին ընտանեկան սուրբ յարկին տակ:

Օրագիր, երեւի թէ ինչպէս իւր փաստաբանական տաղանդին (վասն զի կը կարդամք լրագրաց մէջ, որ ամուսնական վեճերու նկատմամբ երբեմն փաստաբանի պաշտօն կը կատարէ), նոյնպէս եւ ամուսնական նոր օրինաց խմբագրութեան վերայ մեծ վստահութիւն ունի, կարծելով թէ այս ճանապարհաւ ամեն ամուսնական եղծումներ կ'անհետին. բայց խիստ անհիմն եւ խարխուլ է իւր համուզումն եւ աւելի պատրիշ երեւակայութեան ճնունդ քան թէ ուղիղ բանի և բարոյական իմաստասիրութիւն: Մեր այնպէս գիտեմք, որ ինչ տեղ բուն բարոյական օրէնքներն, Աւետարանի օրէնքներն, անգիտարար առ ոտն կը կոխուին և մարդկային օրէնքներ կը յերիւրուին, այն տեղ միշտ ընկերականութիւնն կը վնասի և կը տուժէ: Ընտանեկան կեանքն, ամուսնական

կեանքն ընկերականութեան հիմն կը
կազմէ և ունի իւր յատուկ բարոյա-
կան օրէնքն, ունի իւր հիմնաքարն,
այն է սկզբունքն Աւետարանի, որ ա-
մուսնութիւնն սրբազործող միակ գիր-
քն է աշխարհիս վերայ: Ամուսնու-
թեան նկատմամբ Աւետարանի քարո-
ղած միակ օրէնքն է Սէ՛ր, Փոխ ԱԳԱՐՁ
Սէ՛ր, ՍՈՒՐՔ Սէ՛ր: Ինչ տեղ չը կայ
սոյն երկնային օրէնքն և սոյն օրինաց
գիտութիւնն, այն տեղ անգոր, իս-
պառ անգոր են ամենայն օրէնք և փա-
ռաքանութիւնք: Ուստի ընտանեկան
կենաց երջանկութեան ամեն փափա-
քողներու միակ ջանքն պիտի լինի սի-
րոյ սուրբ օրէնքն, սիրոյ օրինաց սուրբ
գիտութիւնն ու դաստիարակութիւ-
նըն ծաւալել Հասարակութեան մէջ:
Օրագիր իսկ պարտական է իմանալ, որ
Նկեղեցին, իւր բռնաւոր կարծած և
ո՛չ կարեմ արտասանող Նկեղեցին, ե-
թէ ամուսնութեան նկատմամբ բազ-
մաթիւ օրէնքներ չէ սահմանած, իւր
միակ նպատակն եղած է սիրոյ սոյն մի-
ակ օրէնքն թագաւորեցնել, որ լրու-
մըն է ամենայն օրինաց և մարգարէից
Նկեղեցւոյ բռնած ընթացքն խիստ օ-
րինաւոր է և անմոլար: Ուստի եթէ
նոր օրինաց խմբագրութեան սիրա-
հարներն շատ զմայլին իրենց օրէնքնե-
րով և համարձակին Նկեղեցւոյ անուամբ
Նկեղեցւոյ մէջ մուծանել, կարծեմ թէ
Նկեղեցին կրտսիրուի ասել այդ օրի-
նականներուն — “Ձեր նոր օրէնքնե-
րով, ձեր քաղաքական օրինադրա-
թեամբ, մի մոնէք իմ ծոցս, վասն զի
ես անօրէն չեմ, ես Օրինագիրք ունիմ,
Օրինագիրք սիրոյ և երջանկութեան,
այն է ԱՒԵՏԱՐԱՆ. փոխանակ նոր օ-
րէնքներ խմբագրելու, իմ օրէնքներս
ուսէք և այն շատ է ձեզ”:

ԱՐՇԱՒԱՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ե Ի

ՀԱՅԿԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Արշալոյս, իւր 961 թուով վեհ.
Կաթողիկոսի մի կոնդակի հրատարա-
կութեան առթիւ, այսպէս կ'ասէ.
“Գրաբար գեղեցիկ լեզուին կենդա-
նութիւնն հաստատուն կը պահէ. իսկ
Երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքա-
րաններն որ և իցէ պատճառանօք կամ
սխալ ըմբռնամբ (փոխանակ ասելոյ՝
ըմբռնամբ) աշխարհաբար գրելու
աղբալնաս սովորութիւնն ընդունելով
դժբաղդաբար արդէն կիսամեռ դար-
ձուցած են զմեր գրաբար ընտիր լե-
զուն”:

Արշալոյս, իւր 953 թուով
Հնդկաստանէն դրկուած մի նամակի
հրատարակութեան առթիւ ջատա-
գոված էր նմանապէս զնամակագիրն
քաջ հայկաբան անուանելով և նորա
գրուածքն յօրինակ այլոց ներկայաց-
նելով: Գուցէ ուրիշ առիթներով եւս
խօսած է հայկաբանութեան կամ գը-
րաբար լեզուի վերայ, բայց մէք ա-
ռանց երկարօրէն հետամուտ լինելու
և Արշալուսոյ թերթերն թղթատելու,
այսքանն եւս բաւական կը համարիմք
նոյն խմբագրի առ մեր գրոց լեզուն
ցուցած պաշտպանութեան կամ նա-
խանձախնդրութեան չափն ծանուցա-
նելու հայադէտ բանասիրաց:

Ընդհանրապէս առնելով որ և իցէ
սկզբունք, դրութիւն, ճշմարտութիւն
և փաստ պաշտպանելու առաջին և
անհրաժէշտ պայմանն է լիովին հմուտ-
թիւն ունենալ պաշտպանած առար-
կային նկատմամբ. իսկ մասնաւորա-
պէս գրագիտութեան կամ որ և իցէ
լեզուի գիտութեան նկատմամբ առըն-
լով հարկ է անշուշտ, որ պաշտպա-
նողն ո՛չ միայն տեսական կանոնաց հը-

մուտ լինի, այլ նաեւ գործնականին մէջ վարժ և կրիթ, որպէս զի ոչ մի այն բանիւ, այլ նաեւ գործով պաշտօնական իւր փափագածն և արդիւնաբեր կերպիւ ազդեցութիւն ունենայ Հասարակութեան վերայ: Մէք համոզուած եմք, որ ինչպէս բարոյակա նութեան քարոզիչներէն կը պահանջուի ոչ միայն գիտութիւն կամ խօսք, այլ նաեւ գործք, նոյնն կը պահանջուի նաեւ գրոց կամ աշխարհիկ լեզուին նախանձախնդիր պաշտպաններէն: Նոցա մէն մի յօդուածներն, իրենց ոճով և կատարելութեամբ, կենդանի տիպարներ պիտի լինին իրենց պաշտպանած նիւթոյն: Ամփո, որ սղբ գրարար կամ աշխարհաբար գրեն, նախ ինքդ գրէ, բայց լաւ գրէ, որպէս զի այլ սիրահարին քեզ հետեւիլ: Եթէ ինքդ քո քարոզութեան առաջին գործադիրն չես, իմացած լինիս, որ ունայն է քարոզութիւնդ, ունայն է քանքդ:

Ճիշդ սոյն տարօրինակ և հակասական դրից մէջ կը գտնուի Արշալուսոյ խմբագիրն. զինքն պաշտպան կը հանդիսացնէ գրոց լեզուին եւ առիթներ կ'որոնէ ջատագովութեան. սակայն երկար տարիներէն ՚ի վեր միշտ աշխարհիկ լեզուաւ կը հրատարակէ իւր լրագիրն: Ո՞վ կը հաւատայ Արշալուսոյ խօսքին, քանի որ գործով և իրօք հակառակն կը գործէ: Ո՞վ չը տեսներ, որ Արշալուս իւր բանիւ քարոզածն գործով կը տապալէ և աւելի աչքակապութեան դեր կը խաղայ, քան թէ ճշմարիտ պաշտպանութեան եւ ջատագովութեան: Բայց Արշալուսոյ թերութիւնն միայն գործնական հակասութեան մէջ չը կոչանար: Արշալուս հակառակն է նոյն իսկ տեսակա նին մէջ: Նա ուղիղ տեսութիւն եւ հմուտութիւն չունի գրոց լեզուին, կամ

լատիւր ասութեան, գրաբարին նըկատմամբ: Նա՞ ոչ թէ գրոց լեզուի ոգւոյն, այլ քերականական կազմութեանն անգամ անհմուտ կ'երեւի, և հետեւապէս, իւր կարծեցեալ պաշտպանութեամբ, աւելի կը նսեմացնէ գրոց լեզուի փառքն, քան թէ կը փոշլեցնէ: Եթէ սակաւ ինչ հմուտ լինէր նախնեաց գրական լեզուին, քանի որ պաշտպան կը ձեւանայ, պիտի խորշէր գրաբար, աշխարհաբար, հայկաբան, հայկաբանութիւն բառերն ՚ի կիրարկանելու, որոնք նախնական չին: Պիտի գգուշանար իւր հրատարակած կոնդակն ու նամակն բաց հայկաբանութիւն կոչելու, որոնք ոչ միայն նախնեաց գրաւոր լեզուի կազմութենէն ու վաշերուչ դասաւորութենէն հեռի են, այլ նաեւ քերականական սխալներ, անհարթ ու անպատշաճ բառեր եւ հանելուկական դարձուածներ կը պարունակեն: Այս գիտողութիւններն առնելով կը յայտնեմք հրապարակաւ, որ մեր խօսքն ուղղակի Արշալուսոյ հետ է և ոչ թէ կոնդակագրի և նամակագրի, որոց մոքէն անգամ, կը հաւատամք, անցած չէ երբէք քաջ հայկաբանի գովեստ յարիշտակել: Վասն զի Էջմիածնի կոնդակներն արդէն ատենադպիրներն կը գրեն և ոչ թէ վեհ. Կաթողիկոսն. իսկ Հնդկաստանի նամակագիրն լոկ լուր միայն ցանկացած է հաղորդել և ոչ թէ Արշալուսոյ միջոցաւ հայկաբան հռչակուելու անպարկուտութեան տենչալ: Գարձեալ կը կրկնեմք, որ մեր խօսքն ուղղակի Արշալուսոյ հետ է, որ նախնեաց գրաւոր լեզուն հասկնալու և գնահատելու չափ հմուտութիւն և կարողութիւն չունի, և սակայն բանասիրաց առջեւ կը տենչայ հմուագոյն գրագիտի դեր խաղալ:

Արշալուս, եթէ հմուտութիւն ունենար, անշուշտ պիտի նշմարէր, որ ոչ

միայն կոնգակի ինչ ինչ դարձուածներն հեռի են նախնական գրաւոր լեզուի յատկութենէն, այլ քերականական վրիպակներ անգամ կը տեսնուին, ինչ պէս է գիտացայք պաշտպանել արիւն, քեամբ, փոխանակ ասելոյ գիտացիք:

Արշալոյս, եթէ հմտութիւն ունէ նար, երբէք, բնաւ երբէք քաջ հայկաւ րամուքիւն պիտի չ'անուանէր Հնդկաստանի նամակն, որոյ մէջ այնպիսի ա նիմաստ բառեր, անյարմար խնդիրներ, անպատշաճ ածականներ, անտեղի նախ դիրներ և հանելուկական դարձուած ներ կան, որք կատարեալ աղաւաղմունք են նախնի'աց գրաւոր լեզուի, քան թէ գոյութեան արժանի յատկութիւնք: Օրինակի համար, նախնի ընտիր մա տենագրութեան կազմածոյն հետ ինչ համեմատութիւն ունին Արշալոյսոյ իբրեւ քաջ հայկաւրամուքիւն հռչակած Հնդկաստան նամակի հետեւեալ տողերն: «Դարձեալ դէպ տայ ինձ յղել պատառիկ ինչ. — ձգեաց զձիւսն անդէն 'ի կողմանէ այնքան մօտեալ 'ի տուն ուրեք. — կառավարն... վագեաց յետոյ տրեմն յետ կուսէ կառացն յերկիր. — կառք և կառավար գտան բացագոյն ուրեք բազմախորտակ. — երեկոյ էր հողմախաղաղ, ոչ ինչ զովագոյն քան զգնացեալ տիւն մըձկուտ. — Որպիտի ընդ կրկին յեղեղակս միայն է տեսանել. — Ուստերք անտիականք. — Եւ հետ ընդ հետ անցեալ զկառք, հասի 'ի քաղաքն. — Ի ձախմէ անցանել զհամագը նաց կառք, որոց ազգեն զանձինս 'ի շաչիւն մտրակի? — Կառավարն... չրջեաց զձիւսն անդէն թափով անձուկ անդր անջրպետ կառաց. — Կառացն բեկեալ էր ձող ընդ մէջ և սայրք նորա ետ ընդ ետ խթէին զկողս անասնոյն. — Խուսն եղի 'ի մտի կալ մնալ 'ի կառքս? — Եւ յայնմ վայրի յտն կացեալ և ակն տուեալ գտաւ ճեղք. — Եւ 'ի գառ-

նալ նորա անկաւ ձողն բեկ ձիոցն խը թան? — ընթացայ ձիգ. — Եւ որ ծնող զհասակդ զայդ հաւատայցէ անոք 'ի խուան?»: Գ:

Արշալոյս սոյնոյիսի աղճատ հրա տարակութեամբ հայկական նախնի գրաւոր լեզուին ջատագով հանդիսա նալէն զինի' կը համարձակի նաեւ ամբաստանել Երուսաղէմի և Պօլսոյ պատ ըրիարքարաններն, որպէս թէ աշխարհիկ լեզուաւ գրելով մեռուցած են գրոց լեզուն: Մեք այնպէս գիտեմք, որ Երուսաղէմի և Պօլսոյ պատրիարքարաններն իրենց ընդ հանրական թրդ թերն կամ կոնգակներն մեծաւ մասամբ նախնի գրաւոր լեզուաւ կը գրէին, և Արշալոյս, եթէ պատեհու թիւն ունեցած չէ ամեն կոնգակներն կարգալ, անշուշտ կարդացած է Ս. Աթուէս Եգիպտոսի թեմական Հայոց ուղղուած և ՍԻՕՆԻ մէջ (1872, թիւ 2) հրատարակուած կոնգակն, որ կարծեմ թէ հայկական նախնի գրաւոր լեզուի վայելչութեան և յատկութի կողմէն ամենեւին չը նմանիր իւր յառաջ բերած և ջատագոված աղաւաղ գրուած ներուն: Թողունք այս, վասն զի Երուսաղէմի և Պօլսոյ պատրիարքարաններն, եթէ իրենց ամբողջ գրուածնէ ընն իսկ նախնի գրոց լեզուաւ գրելու լինին, դարձեալ այն անպարծութիւ նըն չունին, թէ այնու պաշտպան կը հանդիսանան նախնեաց գրաւոր լեզուին: Բայց կը զարմանամք թէ Արշալոյս որչափ շատես կամ կարճատես է, որ մի կոնգակի կամ նամակի հրա տարակութեամբ կը կարծէ թէ այս ինչ կամ այն ինչ անձն գրոց լեզուն կը կենդանացնէ, մինչդեռ Երուսաղէմ, որ հետ զհետէ այսքան նախնի մատենագրութիւններ կը տարագրէ, Արշալոյս աչքին դարձեալ կ'երեւի նախնի գրաւոր լեզուն մեռուցանող: Ե-

բուսաղէմի և Պօլսոյ պատրիարքարան
ներն պարագայից և պիտոյից համե-
մատ կը դրեն և կը հրատարակեն թէ
գրոց և թէ աշխարհիկ բարբառնե-
րով, ժամանակին թողով որ լուծէ
գրաբարի կամ աշխարհաբարի նախա-
պատուութեան և կարեւորութեան
խնդիրն: Եւ ընդ սմին քաջ համազ-
ուած են, որ Արշալուսոյ նման անհը-
մուտ փաստաբաններն ու ջատագով-
ներն աւելի կը վտանգեն նախնի գրա-
ւոր լեզուի յարգն ու պատիւն, քան
թէ այն համեստ և գործունի հայա-
գէտ բանասէրներն, որոնք երկու բար-
բառներն եւս կ'ուսումնասիրեն, կը
հետազոտեն, կը մշակեն, համոզուած
լինելով՝ որ սոյն եղանակաւ ոչ գրա-
բարն և ոչ աշխարհիկն կը վտանգուին,
այլ երկոցունց ուսումնասիրութենէն
և մշակութենէն՝ կը կազմակերպի մի
նոր և ճոխ լեզու հայկական:

Արդ՝ սոյն հակիրճ գիտողութիւնն
բաւական համարելով՝ բարեկամաբար
յորդոր կը կարգամք Արշալուսոյ, որ
անգիտաբար չընետուի այնպիսի խնդ-
րոց մէջ, որոց վերայ լիովին ծանօթու-
թիւն և հասուն հմտութիւն չունի:

ԵՐԱՆԵՆԿԱԳՐԱԿԱՆՔ

Քաղաքիս մէջ Պարսկական Հիւ-
պատոսարան հաստատուեցաւ և նոր
Հիւպատոս գալով արդէն սկսած է
վարել իւր պաշտօնն:

— Բ. Դրանէն Ս. Տեղեաց և մա-
նաւանդ Բեթղէհէմի խնդրոյն նկատ
մամբ՝ նշանակուած քննիչն քաղաքս

ժամանեց եւ արդէն ձեռնարկած է
քննութեան, բայց արդիւնքն անյայտ
է տակաւին, որովհետեւ պաշտօնական
կերպիւ ուղղակի Բ. Դրան կը հաղոր-
դուին:

— Բեթղէհէմի մէջ հեռագրական
կայարան հաստատուեցաւ և արդէն
կը շարունակի հաղորդագրութիւնն
քաղաքիս հեռագրատան հետ:

— Բեթղէհէմի զօրանոցի հիմնադ-
րութիւնն սկսուեցաւ, և որովհետեւ
կից էր մեր Գերեզմանատան, Ս. Աթո-
ռոյս կողմէն ամեն հնարաւոր միջոցներ
գործ դրուեցան, որպէս զի մեր իրա-
ւունքէն մեծ մաս մի չը զոհուի յիշեալ
շինութեան: Յոյնք, որոց գերեզմանա-
տան նոյնպէս յարակից է հիմնարկեալ
զօրանոցն, անտարբեր դիմք բռնեցին
ներկայ խնդրոյս մէջ եւ շարժառիթն
անձանօթ է տակաւին: Եթէ տարա-
ծուած զրոյցներուն հաւատ ընծայենք,
այնպէս կը խօսուի Հասարակութեան
մէջ, որպէս թէ շինուելէն զինի՝ Յոյնք
պիտի գնեն յիշեալ շէնքն:

— Ս. Աթոռոյս Ընդհանուր Ժողովն
բաւական ժամանակէն ՚ի վեր շարու-
նակ նիստեր կ'ընէ իւր Ելեւմտական
բաղմամբայ Հաշիւներն եւ ապագայ
տարւոյն Հաշուէկշիւն պատրաստելու,
Կանոնական Ծրագրաց խմբագրու-
թիւնն վերադիտելու, Տեսչական պար-
տաւորութեանց սահմաններն դժելու:
Եւ կարեւոր ժողովներն վերանորոգելու:
Կը յուսանք թէ սակաւ ժամանակէն
զինի Ս. Աթոռոյս Ընդհանուր և Մաւ-
նաւոր Ժողովոց աշխատութեան ար-
դիւնքն կը հրատարակուի ՚ի գիտու-
թիւն համօրէն Ազգայնոց:

ՅԱՆԿ

ՄԵՅԻՍ

| | |
|---------------------------------------------|-----|
| Որդիք Աստուծոյ .— Խօսք Երկրորդ . | 97 |
| Դաստիարակութիւն կանանց . | 106 |
| Օրագիր և ամուսնական խնդիր , | 115 |
| Արշալոյս Արարատեան և հայկաբանութեան խնդիր . | 117 |
| ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ , | 120 |

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Միշը ամէն ամիս կը հրատարակուի 2½ երեսէ բաղկացեալ մէկուկէս ութանգալ թղթով .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մեծիտիկէ , հանգերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարել .
- Գ. Զատ տետրակ առնել ուղղող , պէտք է ամեն մէկ տետրին շորս դա-
հեկան վճարել .